

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԲԻԻ 34

23 ՕԳՈՍՏՈՍ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջակեհեան առաջ. (Թե ի՞նչ կը խորհիմ) Չիֆթի-ՍԱՐԱՖ : — Մեքոպեան լեզուն ամենա-
կարող (Գրական առաջարկութիւն մը) ՏԻԴՐԱՆ ԵԼՔԵՆՃԵԱՆ : — Վոսփորեան Նամականի.
ՄԵՆԵԱՍԷՐ : — Լեոն ԺԳ. Պապին վերջին տաղը. (Թարգմ. լատինեան բնագրէն) ՏԻԼԵԹԱՆԹ :
— Հարիւր Ամերկեաններու կառնիք՝ ամուսինի ընտրութեան մասին. ՄԻԼԼԼԱ : — Ներ-
շնչաբան (Բանաստեղծութիւն) Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ : — Խմբագրական Նօթեր :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հաշուը դրո.
5 ԳՐԱՆԵՐՈՒՆ ԿԱՐԱՐ ԽՈՒՆ ԴՐՈ., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Զրանք կամ
5 ԳՐԱՆԵՐ : Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելի ամեն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առա-
կութիւնները նկատողութեան չեն առնուիր :

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայ-
մաններով :

Զեմ-Էի ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱԴՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در عیاده غلطه (ماسيس) غرضهسى اداره

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Rédaction de la Revue MASSIS

Կ. Պոլիս, Հալափա

Galata, Constantinople

ԱՅՍ ԿԼԻՄԱՅԻ ՄԷՋ

Ընդհանուր վիշտեր կան որոնք այս աշխարհածանոթ դեղով կատարելապես կը բժշկուին:



SCOTT'S EMULSION

Հազ, հարբուխ, և բոլոր որկորի և թոքի վիշտերին հպէս թորացաւ, և պրօնշիտ, շնճառութեան և կուրծքի երակներուն փորփորոնմը և միւս տկարութիւնն պատճառող անհանդատութիւններն՝ անմիջապէս կը զսպուին, և կը տկարացուին և վերջապէս կը բժշկուին: Կրտսնաւանդ ծիւրական ակտի նկատմամբ՝ առաջին նշանն տեսնուած ասին, անմիջապէս առաջըր կ'առնէ: Եւ ընտանիքի մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք դեղարան մը դիմել և:

ԸՍԳՕԹԻ ԲԱՂԼԳՐՈՒԹԻՈՒՆ

մը առնել: Ըսգոթի Բաղադրութիւնը այս աղետը կ'զարկնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականգնէ:

Հիշերու փայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

19

Բոլոր բեղաբերքները և բեղաձաճանքները իր ծախսին:

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւ այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շարաթական վճարում: Կանխիկ զեղին համար հարիւրին 5 զեղի: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղով եւ կ'առնուին: Իսկ ապառիկ գընդներէն՝ 100ին 15 զեղով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ Չինաստանէն, Հնդկաստանէն, Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բարձր, հոսաւե՛ս եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք սառուտան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Ներպաշահ:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն դնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կամուրջին գլուխը լրագրաւաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա-
ռավարութեան ֆոնդայիմ ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին հա-
մար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա-
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ
ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գոր-
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց
ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հաւ-
րածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարի-
զի՝ Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ
Պուտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ
տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարչէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիօնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէօի,
Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպիւնթիք, Հալլը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց,
Քրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւններ:

Մասնաւորապէս ուշադրութեան անուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկե-
րութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ
մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քըն-
նութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատուութեան է՝ Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ
իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագ-
րութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie
générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գոր-
ծակալութիւնը:

Հասցէ.—Պօլիս, Մահմուտ փաշա, Պէոյիւք Երլտըզ խաչ, թիւ 14, Լա Գօնֆիանս ա-
պահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը Էդոլդ ագ-
րիտի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն
առեւծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄԲ

1881 մարտ 20ի Կայս. Ուքադով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի Կեանքի վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄԵՆՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵՆԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄԵՆՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՄՐՈՒԵԼՈՆ ՊԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած
Երաշխաւորութեան գումար աւելի քան

10,666,667 Ֆրանք
137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուրոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղսրեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօմրիւք խան, Բարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՁԱԿ

Վարժարանիս նպատակն է տալ միջնակարգ. հիմնական կրթութիւն մը, հետեւելով Անգլիական ու Ամերիկեան Նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագրին: Նոյն ատեն ալ, սակայն, նկատի առնելով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տնտեսական ու Պետական լեզուներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ ֆրանսերէնի: Ամենէն պզտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշակերտները կանուխէն ընտելանան Անգլիերէնի: Տնօրէնը Տոքթ. Չէյմպըրս կ'աւանդէ տոմարակալութեան դասը, որ մասնաւորապէս կը յարմարցնէ ընթացաւարտները գործնական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգամայն մօտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Դիտական ճիւղերու դասախօսութիւններն արդիւնաւորելու համար՝ վարժարանը ունի պիտանի՝ ու աւհրա. մեծ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը:

Նորակառօյց նպատակայարմար շէնքը եւ նորստաց ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակեւ աւելի նպաստաւոր են աշակերտներու հանգըստութեան եւ առողջութեան, գեղը ըլլալով արդէն հանրաժանօթ՝ իր մաքուր ու դռմն ու գեղեցիկ տեսարաններով:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տարեշրջան) տեղի պիտի ունենայ Սեպտեմբր երեքին (Ն. Տ.): Տարեթոշակն է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ՝ Պայպլը-Հաուզ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պարտիզակ:

ԱՄԵՐԻԿԱՆ ՎՐԺԱՐԱՆ ԻՒՍԿԻՏԱՐ

Ամերիկեան Վարժարանի յառաջիկայ տարեշրջանը կը սկսի 1903 Սեպտ. 15ին (Ն. Տ.): Գիշերօթիկներու տարեթոշակն է 35 օսմ. ոսկի: Ուսումնարանին չորս դասընթացքներուն համար, իսկ 30՝ նախակրթարանին համար:

Տնօրէնութիւնը ջանք չէ խնայած վարժարանը ամէն առաւելութիւններով օժտելու: Հաւաքոյն դրութիւնով եւ մեծ յաջողակութիւնով կ'ուսուցուին Հայերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն, Գերմաներէն եւ դասական լեզուները, ինչպէս նաեւ բնական գիտութիւններ:

Հմուտ եւ վարժ հիւանդապահուհիի մը աշակուրջ հսկողութիւնը կը վայելեն աշակերտուհիները եւ կ'ապրին խաղաղ ու բարեկարգ մթնոլորտի մը մէջ:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել վարժարանին Տնօրէնուհի Տր. Փէթրիքի:

ՄԱՍԻՍ

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 34

23 ՕԳՈՍՏՈՍ 1903

ՎԵՐՋԱԿԵՏԵՆ ԱՌԱՋ

(ԹԷ ԻՆՉ ԿԸ ԽՈՐՀԻՄ)

Ինթացիկ սովորութեան մը համեմատ, պէտք է որ հրապարակային ամէն հարցում ընող, իրեն տրուած պատասխանները կարգալէ ետքը, եզրակացութիւն մը հանէ այդ ամենէն, որ իր կարգին ակտաճանաչութեան մը, լուսաբանութեան մը, բարոյական դասի մը ծնունդ կուտայ շատ անգամ: Այդ սովորութեան հետեւելով է որ Մասիսի Պատ. Խմբագրութիւնն ալ փութացած է հրապարակով հրաւեր կարգալ ինծի որ պարտականութիւնս կատարեմ:

Եզրակացութիւն մը չէ հիմա իմ հանելիքս. նախ անոր համար որ եզրակացութիւն մը միշտ էն վերջը իր խորհածը imposer ընելու ձեւ մըն է կարծես, հարցումին նախաձեռնութիւնովը ձեռք բերուած իրաւունքի մը պէս. և յետոյ սա պարզ պատճառով որ հարցումս սահմանափակ խնդիր մը չէր ներկայացներ և չէ կարելի անոր վրայ դատում ընել՝ հիմնուելով միմիայն հինգ պատասխաններու վրայ, որոնք ինչքա՛ն ալ անկեղծ ըլլան ու շահադրժական, տեղական գոյնով ու նեղ սահմաններով մանրանկար ուսումնասիրութիւններ են միայն և չեն կրնար լիազօրութիւն տալ մեզ, խօսելու համար ընդհանուրին անուշով: Ես չեմ բաւականանար այդչափով ու թէեւ եկած պատասխանները, ձեռնհաս ու խիստ արժանաճաւատ անձերու կողմէ գրուած, միշտ իրար կը բռնեն կոր ընդհանուր գիծերու մէջ, բայց երբեմն առանկ անակնառնելի յայտնութիւններ գտայ անոնց մէջ որ հաճոյքս անչափ պիտի ըլլար,

եթէ ուրիշ պատասխաններու ալ մէջ, նմանօրինակ ուրիշ նորութիւններ կարենայի որսալ: Ատոր համար է որ միշտ անհուն հետաքրքրութիւնով սպասելու վրայ էի, դեռ ուրիշ բաղմանայ դաւառական կեդրոններէ դալիք գրութիւններու: Բայց, Մասիսի Խմբագրութիւնը, առանց պատճառի չէ անշուշտ որ կը փութայ խնդիրը փակել, գէթ իր սիւնակներուն մէջ և ինծի հրաւեր կը կարգայ որ վերջակէտը ես դնեմ:

Խնդիրին հոգիին անցնելէ առաջ՝ կը կըրկնեմ որ «հարցում»ս կնկան կենսական հարցն է մեր մէջ, որ կապ ունի ամուսնական, ընտանեկան, ընկերային շատ մը նիւթերու ու խնդիրներու հետ և չի փակուիր, չի լուծուիր, մէկ-երկու աւելի կամ պակաս կարճառօտ պատասխաններով: Բայց գոնէ բաւական լուսաբանուեցանք և եթէ անպատճառ պէտք է եզրակացութիւն մը հանել, ամէն մարդ կրնայ ընել այդ բանը իր ուզածին պէս ու խելքին չափովը: Ես, զժբաղդաբար, բաւական տրամադրելի ատեն չունիմ և ոչ ալ կրցայ բաւական ատաղձ համբարել եկած գրութիւններուն մէջէն, խորամբողջական ու բաղդատական ուսումնասիրութիւն մը փորձելու համար, դաւառներու, Եւրոպայի, ու Պոլիսի սեռային ու ամուսնական խնդիրներուն ու յարաբերութիւններուն վրայ: Բայց նորէն կը փորձուիմ ամփոփում մը ընելով խորհածս ըսել և եկած պատասխաններուն մէջէն կարեւոր ու saillant հատուածներ փրցնել ու բերել հոս, զանոնք թերուղէմելու և եթէ կարելի ըլլայ, կցկոտուր

այդ հաւաքոյթէն հանրութեան օգտակարութիւն ունեցող բան մը ժայթքեցնելու համար :

Ամենէն առաջ մեր ազնիւ բարեկամներէն Սմբատ Դաւթեանն է որ երկու առաւելութիւններով կը ներկայանայ մեզի : Նախ , քիչ շատ գիտական մէթոտով մը ու ընդհանուր կերպով կը խօսի մեզ՝ գաւառներու վրայ , առանց մասնաւոր անկիւնի մը ցոլքը ըլլալու , մասնաւոր որ իր կարողութենէն ալ դուրս չէ ատ , քանի որ ինք շատ զբաղած է ազգագրական այդ կարգի բազմաաւար հարցերով : Եւ յետոյ Ակնեցի է մարդը , գերազանցապէս սիրոյ , տենջանքի ու վայելքի այդ երկիրէն որ կարկառուն կերպով կը զանազանուի իր շրջակայ գաւառներէն ու բոլորէն , իր անկեղծ ու համարձակ հեշտախնդրութիւններով , ներողամիտ բարքերով ու սանձարձակ ապրելապաշտութիւնով : Ատրկա առիթը կուտայ իրեն աւելի լայնահայեաց ըլլալու , և նուազ ամօթխածօրէն դուրս տալու իր գիտցածը :

Իր դրութեան մէջ մէկէ աւելի կէտեր կան զորս վեր պիտի առնեմ , բայց այդ բաները , գրեթէ բոլոր միւսներուն մէջ ալ ըլլալուն , ընդհանուր կերպով պիտի խօսիմ անոնց վրայ . բայց բան մը կայ որ անախկալ կերպով ու թերեւս առանց՝ մասնաւոր պիտուի , իր գրիչին ծայրը կուգայ , հարցումս մասերու բաժնուած ատեն , և որ հիմնական խիստ զօրաւոր նկատելի կէտ մը կը ներկայացնէ , զոր միտքս ձգելուն համար մասնաւոր կերպով կուղեմ իրեն շնորհակալ ըլլալ հիմա հոս : Ես Շահարիկէն առնելով հարցումս հիմնած էի ապօրէն յարաբերութիւններուն վրայ և ահա յանկարծ Դաւթեան ածբնական յարաբերութիւններուն զանգակը կը հնչեցնէ ականջիս : Ասոր վրայէն լուծութիւնով անցնիլ չէ կարելի և յետոյ ամէն մարդ կը զգայ այդ երկուքին միջև եղած անհաւասար տարբերութիւնը : Հայերու ու գաւառներու առանգական մաքուր բարքերու բարձրաբարձու մունետիկները , որոնք միեւնոյն ատեն պարտականութիւն մը սեպած են իրենց՝ եւրոպական սեռային անսանձ ապականութիւններու խրատելակը խաղցնել մեր աչքին , պէտք են գիտնալ որ

բարոյական տեսակէտով իրենց չի հաւնած այդ միջավայրերուն մէջ գրեթէ չիկան այն անբնական յարաբերութիւնները զորս կ'ախարհէ Դաւթեան էֆ . և որոնք խիստ բնական բանի մը պէս ծագկած ծաւալած են մեր մէջ ընդարձակ աստիճանի մը վրայ : Պէտք են զիտնալ նաև որ , երբ տունի մը մէջ , ինչչափ ալ նահագնական ըլլայ ան , տղայ մը , եղբայր մը , էրիկ մը , ունին այդ անբնական մոլութիւններէն մէկը , հոն աղջիկը , քոյրը , կինը չեն կրնար ինքնաբերաբար պարկեշտ մնալ , à moins que բռնակապ չի դրուի անոնց զեղուն գագաթներուն : Հասարակութիւն մը որ իջած է այնչափ վար , որչափ պէտք է տիրաւալու համար այդ հրէշային մոլի ախտերուն , աւանդական , մաքուր , պայծառ , վճիռ ու չեմ գիտեր ինչ բարքերու տէր չի կրնար եղած ըլլալ ու պարծենալ անոնցմով : Տասը տարուան շրջանի մը մէջ գործով գրեթէ միշտ ու միմիայն գաւառացիներու հետ յարաբերութեան մէջ ըլլալով , հազարներով ճանչցած եմ անոնցմէ , ամենքն ալ քիչ շատ գործի մարդ , զիրքի տէր , խելահաս , շնորհքով կարծուած մարդիկ , որոնց մեծ մասը կը կրէին իրենց մէջ ու Պոլիս ալ փոխադրած էին այդ ցաւին միջոցը : Հերքում մը ինքզինք խարել պիտի ըլլար :

Յետոյ կուգայ Շահարիկ , որ իր անկալականդ ու համարձակախօս վիպակալը ծնունդ տուած էր հարցումիս : Իր սրտաւախ՝ կուգայ ըլլալ ինչ որ կը սպասուէր արդէն : Անկեղծ ու մեծաձայն բարբառը ճշմարտութեան : Ընդլայնումը ու շեշտումը իր վիպակին մէջ յայտնուած դէսուդէն տեսութիւններու : Դրեթէ ծայրէ ծայր մութ գոյն է իր գրութիւնը : Վխտացող ապօրինութիւններ իրենց ծագումներով ու պատճառներով , վերէն վար տգիտութիւն , կեղծաւորութիւն , խաչ հանելներ , մոմ վառելներ՝ եկեղեցիին մէջ , խօրին փոշիները պաղնեղներ և դուրսը ամէն աղտեղութիւն՝ ըլլայ սեռային , ըլլայ շահախնդրական : Իրաւ կան հոս ու հոն պարկեշտութեան ու ամօթխածութեան խլեակներ , որոնք սակայն հետզհետէ պակսելու անհետանալու վրայ են , կ'ըսէ ու կը պնդէ

Շահարիկ: Գիտե՞ք ինչու կը զարմանամ: Մինչև հիմա անանկ կարծիք մը չի ունեցած էր, չնորհիւ չօվէններու, ինչպէս ըսած եմ, և ամեն բան ընող ու յարդի տակ ծածկող գաւառացի աղաներու, որ գաւառի մէջ ամէն բան պարկեշտութիւն, սրբութիւն, հրեշտակային անմեղութիւն կը բուրէ, և շատ ջընջին մէկ մասն է որ չեղած է չաւիղէն և թաւալած անբարոյականութեան անյատակ անդունդին մէջ: Հիմա Շահարիկ կը չըջէ աւանդական կարծիքը: Անշուշտ կը փափաքէի որ առաջինը սխալ չըլլար, բայց չեմ ցաւիր, քանի որ երկրորդ ձեւին տակ ճշմարտութիւնն է որ մէջտեղ կ'ելլայ կոր, ինչքան ալ ողբալի ըլլայ ան և յուսահատական, միմիայն անոր համար որ ճշմարտութիւնն է ան և անկէջ միայն կարելի է սպասել ամէն օգուտ: Յաւ մը երբոր մէջտեղ կ'ելլայ, դոնէ դարմանը փնտռելու տեղի կուտայ:

Քէշիշեան ալ, իբր ճշմարտութիւնը սիրող, կարճ պատասխանի մը մէջ, բռնեցքի սաստիկ ու տապալող հարուած մը կուտայ «կոյս բարքերու» կաւէ արձանին, բայց միեւնոյն ատեն կարծես խղճահարութիւն մը կունենայ իր իսկ սեպական մէկ բանը, ըլլայ աղուոր կամ տգեղ, կոտորելու կամ փշրելու և մեղմացուցիչ պարագաներ կը փորձէ տեղաւորել երկու տողի ընդ մէջ որոնք չեն զօրեր սակայն: Այդ մեղմացուցիչներուն և առճաստիկ իր յայտնած տեսութիւններուն վրայ մտածածս պիտի զուրցեմ, քիչ մը վարը, ընդհանուր նկատողութիւններու մէջ: Մինակ չի մոռնամ իր ալ գրուածքէն վերառնել, օղիի ու ծխելու մոլութիւններուն մէջը ինկած իր Տիարպէքիւրցի կիները: Արդէն Տիարպէքիւրի բարքերուն վրայ լսածնութեան քով ասոնք կը տօգունին և նորութիւններ ըլլալէ հեռու կը մնան: Ռ. Չարդարեանի մէջ բերած գնդղիական ախտաւորներն ալ մէկտեղ առնելով, կերեւայ թէ մեր կիները պիտի կրնան մրցիլ եւրոպական ամենէն *alcoholic, syphilitique, dégénéré* միջավայրերուն հետ և ան՝ անանկ տեղեր ուր կիները ամօթխածօրէն ու երեւութապէս ինքզինքնին հեռու կը պահեն տղամարդերու նայուածքներէ ու ներկայութենէ, ինչպէս ինքն իսկ՝

Քէշիշեան կ'ըսէ, մինչդեռ աչքը բաց մէկը դժուարութիւն չի պիտի քաշէր զանոնք բռնելու համար օտար էրիկ մարդերու թեւերուն մէջ, ամենէն չսպասուած ատեն մը ու տեղ մը:

Յ. Գաղանձեանի կարճ բայց կուռ իրայայտնութիւնը վերին աստիճանի շահագրգռական երեւցաւ ինծի. նախ անոր համար որ հակառակ թմբուկ մը կը զարնէ ընդհանուր ներդաշնակութեան մէջ և յետոյ թերեւս անոր համար որ հոգեբանութիւնը սիրող ու անոր վերաբերած հարցերը աղէկ սերտող մը եղած է ան միշտ: Կ'արժէր որ առանձին յօդուածի մը նիւթ ընէի զայն, բայց ինչպէս ըսի, ժամանակս չի ներեր և հոս պիտի բաւականանամ ընդդիմադիրի դեր ստանձնելով իր քանի մը կարծիքները հակաճառութեան նիւթ ընելու և կարգ մը հակասութիւններ երեւան բերելու որոնք թերեւս նոր լուսաբանութեան մը պէտք ունենան: Միջանկեալ ըսեմ նաեւ որ գոհ եմ իր հակառակ կարծիք յայտնելէն, որով վիճաբանութիւնը կամ խնդիրին քննութիւնը թեր ու դէմ կերպարանք մը առնելով, աւելի բաղմամբ մանի ու օգտակար պիտի դառնայ և եթէ ադ՝ իրեն առիթը տուած է հոգեբանի կարողութիւններ կրկին ի յայտ բերելու, զիս ալ պիտի մղէ նոր վարժութիւններ ընելու, փաստելու ու մեկնաբանելու նոր ասպարէզիս մէջ:

Մտացի բարեկամս կը սիրէ պնդել որ հայ կնկան աւանդական պարկեշտութեան և անսասան բարոյականին վրայով, հին ու նոր դրուածներուն մէջ, եթէ քիչ մը շօլէնութիւն կամ չափազանցութիւն կրնան գտնուիլ, իրողութիւնը այն է թէ ընդհանուր առումով ճիշդ են ասոնք: Այսպիսի ուժեղ *sortie* մը հաճելի է ինծի, և սակայն ատոր պատասխանը միւս գաւառացի գրողներէն չէ որ փոխ պիտի առնեմ ես, այլ նոյն իսկ իր դրութեանը մէջէն, քանի որ ինքն ալ շատ չանցած, իր լաւատեսութեան լարձունքէն վար իջած ատեն ու միւս պատասխան գրողները վեր նետուիլ փորձած պահուն կէս ճամբուն վրայ կը հանդիպին ու իրար կը փարին կոր ամրապինդ:

Նախ, սա ըսեմ որ Գաղանձեանի այդ աղուոր կարծիքը, իր, գաւառներու մէջ բացառաբար ու հազուադիւրսօրէն, քիչ շատ պարկեշտ մնացած կեդրոնի մը մէջ ծնած, մեծցած ու ապրած ըլլալուն արդիւնք է: Բայց երբ աչքերը քիչ մը սանկ վեր կ'առնէ և իր շուրջը կը նետէ, կը ստիպուի ոտուով մը ընելու գէպի ետ և ընելու միւսներուն հետ. «Գաւառի նահապետական այս մաքուր բարքերը, պէտք է ըսել, հիմա շատ տեղերու մէջ երբեմնի իրողութիւններ են այլ ևս»: Ահա թէ ո՛ր ցաւալի կէտին վրայ եկանք ամենքս ալ իրարու ձեռք սեղմել:

Գաղանձեան կ'ընդունի թէ կիներ գաւառի մէջ ալ կին է ամէն բանէ առաջ և իրեն ալ բնականաբար օտար չէ, ոչ սէրը, ոչ ալ սեռային զգացումը, բայց ինք կը սեղմէ ու կը սահմանափակէ այդ զգացումները գաւառի կնիկան սիրտին մէջ և կը նմանցնէ զայն Հնդկաստանի որբեւայրիներուն որոնք ինքնաբերաբար կ'երթան եղբի այրուելու, իրենց էրկիներուն խարոյկներուն վրայ: Այդ ինքնաբերաբար իմ խելքս չէ հասած տակաւին: Ատիկա աւելի ընդլզումի պակասով կրնաք որակել, որուն սակայն պատճառը ոչ կրօնք ու բարոյական դարաւոր, ժառանգական ըմբռնումներն են, ոչ զոհողութեան զգացումը, ոչ ալ պարկեշտութեան նշոյլը, այլ ծեծին, խարաղանին բռնութեան հեռապատկերը:

Իսկ որ կ'ընդունիք ձեր գաւառի կիներ ոչ փայտի կտոր մըն է, ոչ ալ երկնային էակ մը, այլ կին է իսկպէս, բնութեան պէտքերովը զեղուն, կը կրկնեմ, անկարելի է որ պարկեշտ կարենայ մնալ ան, ամուսնական այս տխմար պայմաններուն տակ, պանդըխտութեան ու լքումի երկարատե ու յուսահատ սպասումներուն մէջ և տգիտութեան ալ պատճառած ու աւելցուցած անգիտակցութեան, *démence*ին մէջ: Ասոր ապացոյցը նորէն դուք էք որ կուտաք մեզի, քիչ մը վարը յայտնելով որ, աղտոտ ու աղ-զեղ բարքերը ժամանակէ մը ի վեր տիրող դաւանալ սկսած են դաւառներու մէջ: Բայց դուք, փոխանակ թուած պատճառներու, որոնք դարերէ ի վեր տիրող եղած են՝ ի-

րենցմով իսկ անխուսափելի եղող անաքուր այդ բարքերուն հետ, քաղաքակրթութեան կռնակը կը բարդէք ատոր պատասխանատուութիւնը, առարկելով որ կէս դարէ ի վեր դուրսերու հետ յարաբերութիւններու օրէ օր աւելնալուն հետ, ընտանեկան կեանքի դաւառոր ըմբռնումները սկսած են խախտիլ:

Նախ, իմ հաւատալս չիգար որ, մէկէն ի մէկ փոխուած, աղտոտած ըլլան մեր բարքերը, քանի որ վերոյիշեալ պատճառները շատոնց ի վեր դոյութիւն ունէին արդէն: Հին բարքերու վրայ, հիմնական ու անխարդախ *document*ներ կը պահուին մեզի, և կարգ մը ծերունիներու ու մամիկներու, իրենց ժամանակները յաւէտ աւաղող հէքեթութեան զովասանքները միայն կան, որոնք սակայն զուրկ են կարեւորութենէ ու անկողմնակալութենէ: Յետոյ, ան ատեն կեղծիքը շատ աւելի տիրական էր ու՝ միահեծան քան հիմա, զոր ձեռք դատապարտած քաղաքակրթութիւնն է նորէն որ, հակառակ իր շատ մը չարիքներուն, յաջողած է պատուել, իր զիրտական և ուսումնական առաջդիմութեան շնորհիւ:

Գանք հակասութիւններուն: Կ'ըսէք թէ եւրոպական քաղաքակրթութեան հոսանքին տակ մեր հին բարքերը թողուցինք, և մեր ընտանեկան ու ամուսնական սովորութիւնները անցումի չրջան մը բուրելու վրայ են: Եւ այդ պատճառին կը վերագրէք ժամանակէ մը ի վեր յայտնուող աղտոտ ու աղեղ բարքերը: Հոս որոշ ամբաստանութիւն մը կայ եւրոպեան քաղաքակրթութեան դէմ, բան մը որ ուրիշ խիստ շատերէ ալ լսած եմ: Բայց սող մը վար դուք էք նորէն ըսողը որ «գեղերու մէջ մանաւանդ ապականութիւնը աւելի աչքի կը դարնէ, և գեղացի ժողովուրդը, աւելի աղ-գէտ ըլլալով, շատ աւելի գէշ կերպով ինկած ու աւրուած է»: Գաւառական քաղաքներու ընտանեկան կեանքը անգամ դեռ շատ հեռու է քաղաքակրթութիւն ըսուած բանը, մասով կամ ամբողջովին խրայնելէ, ուր մնաց զիւղական համայնքներունը ուր անոր նշոյլը իսկ չիկայ: Ինչպէ՞ս կ'ըլլայ

որ հոն տիրող ապականութեան մեղքը քաղաքակրթութեան ճիտը կը կապէք: Կ'ըսէք թէ քաղաքներու մէջ բարքերը նուազ սանձարձակ ու աւելի վայելուչ են: Ըսել է քաղաքակրթութեան քանի մօտենանք այնչափ բարքերը կ'աղնուանան կոր: Եւ յետոյ մատենիդ ճիշդ վէրքին վրայ դրած եղաք երբոր sqhsութիւն բառը չեղանցիք: Լաւ ուրեմն, ի՞նչ առնչութիւն այդ բառին ու քաղաքակրթութեան միջև, եթէ ոչ անհայտ հակասութիւն մը ու բոլորովին խոտոր համեմատութիւն մը: Աս' առաջին:

Երկրորդ: Կ'ըսէք թէ գեղերու մէջ մասնաւոր ապականութիւնը աւելի աչքի կը զարնէ: Բայց աւելի վարն ալ կը յայտարարէք որ «մեր բնիկ բարքերը ամէն տեսակէտով աւելի լաւ պահպանուած են գեղերու մէջ, որոնք համեմատապէս գերծ մնացած են օտար աղղեցութիւններէ»: Ըսել է հինէն ի վեր, մեր բնիկ բարքերը գեղերու մէջ են պահպանուած ամենէն աւելի հարազատութիւնով: Եւ միշտ այդ բարքերն են որ դուք «տգիտութեան արդիւնք, ապականութիւն» բառերով մկրտած էք: Ըսել է հինէն ի վեր ապականութիւնը գոյութիւն ունեցած է և ատոր տարակոյս չիկար չիտակը, քանի որ դուք այդ տգեղ բարքերը տգիտութեան կը վերագրէք և տգիտութիւնը նոր բան մը չէ այդ սահմաններուն մէջ: Ընդհակառակը, դարեւ ի վեր ծուծերու մէջ անցած բան մըն է ան, որ խաւարամտութեան, նախապաշարութիւն, կեղծիքի մայրն է եղած և աւանդութեան, նահապետականութեան, նուիրական բարքերու անուանին տակ պահոււած է դարերով:

Ուրիշ հակասութիւն: Վերը օտար աղղեցութիւններուն վերագրած էք ապականութիւնը, զոր ամենէն աւելի գեղերու մէջ դատւած էք, ուրիշ գործներու պէս և վարը, ճիշդ այդ գեղերը համեմատաբար գերծ հռչակած էք օտար աղղեցութիւններէ, ինչ որ խիստ բնական է և ինչ որ փորձեցի արդէն ապացուցանել քիչ մը վերը: Ասո՛ց ո՞րն է չիտակը:

Յետոյ, աեղ մը հոգեբանական երեւոյթ

մը բացատրելու առիթով դարաւոր ըմբռնութի մը, նախապաշարութիւն մը անողոք ուժը կը ձանչցնէք մեղի և ամենեւին կեղծիք չէք գտնար, երբոր սեռային զգացումին բնազդն ալ դարձանք աղղելու ատիճան կը չափաւորուի կը սահմանափակուի նմանօրինակ սարգաներու տակ: Ատոր փոխարէն յօդուածը կը վերջացնէք բոլորովին հակոսանայ տեսութիւնով մը որ կը կայանայ ցոյց տալու մէջ թէ, մեր բարքերը իրենց բնիկ վիճակին մէջ աւելի համարձակ էին ու նուազ սահմանափակ՝ սեռային բնազդի նկատմամբ, աւելի հաշտ՝ բնական ձգտումներու հետ ինչպէս նաև գերծ՝ սխալ հասկցուած պարկեշտութեան մը կապանքներէն, զոր անիմաստ կը գտնանք և քաղաքի բարքերն ալ յատկանիշ: Մէկ կողմէն atrophie եղած այդ բնազդը առաջ կը քշէք, միւս կողմէ կը յաջողիք ապացուցանել որ այդ բնազդը իր լրութեանը ու բովանդակ կորովին մէջը ապրած է գիւղական հարազատ բարքերուն մէջ, որոնք մաքուր բարքերը չեն սակայն, հակառակ հարազատ ըլլալուն:

Ուրեքն Ջարդարեանի յօդուածը ոչ նուազ շահագրգռական ու ա'լ աւելի սարսռալի, կուգայ արդէն ըսուածները շեշտել և շարքը փակել, անսահման ցաւի մը տրտում տպաւորութեանը տակ: Ան ալ, առաջին ակտը ու մորմօքի խոստովանութիւնով մը կուգայ վկայել թէ գաւառացի կիւնը, մանաւանդ գեղինը, այսօր բարոյապէս խիստ ինկած վիճակ մը կը ներկայացնէ: Նոյն պատճառներ, տգիտութիւն, ամուսնական անյարմար կապեր, պանդխտութիւն: Ահաւասիկ թէ պարզ հարցումի մը տակէն ի՞նչ կենսական հարցեր կը ըլլին և ի՞նչ լայնածաւալ ու յուսահատեցուցիչ սպառնալիք մը կ'ուրուաղծուի ու կ'երեւայ մէկէն ի մէկ, մեր ամենէն առողջ կարծուած ընտանեկան յարկերուն վրայ սաւառնող, — ցեղին բարոյական ու ֆիզիքական ապաստումը, անճիտումը փութացնող, երբ մենք ամենքս և մանաւանդ եկեղեցիի մեծաւորներ ու համայնքի հովիւներ, դարման մը չենք խորհիր ու գտնար:

Ջարդարեանի ալ գրուածքին ամենէն ա-

ւելի աչքի դարձող մասը incesten է և վերսերեան ակտերը: Եւ ինչ աւելի բնական: Անանկ կեդրոններու մէջ ուր եւրոպական մեր չի հաւանած բարքերուն ազատութիւնները չի կան, ուր ամէն բան կեղծիք է, ուր ամէն բան հաստ քօղի մը ներքեւ կ'անցնի կը դառնայ, արտաքին նշանաւորապէս զարգացած կեղծպարիշտութեան մը ու մաքրակենցաղ երեւոյթի մը տակ, ուր դրացիին հետ տեսնուողը կը բամբասուի, աղջկան մը ժպտողը կը դատաւիտուի, կնկան մը հետ պտտողը չեմ գիտեր ինչ այլանդակութիւններու կ'ենթարկուի, ինչ աւելի բնական, քան հարսեր կամ տղամարդեր՝ որոնք իրենց տունին մէջը իսկ կը փնտռեն ապօրէն ու անբնական յարաբերութիւններ, կը բաւէ որ դիւրին ըլլան անոնք, դադանի մեան, հոտերին դուրս չելլայ, բերնի ծամոց չըլլան, և աւանդական պարկեշտ համբաւին չի վնասուի: Ու ահա հոս ալ տեսէք թէ ինչպէս, միեւնոյն երգիքին տակ քանի մը ազգական ընտանիքներու միանգամայն ապրելու նահապետական հին բարի սովորութիւնը, անուղղակի կերպով կու գայ incestieux յարաբերութիւններու գլխաւոր սատարներէն մէկը ըլլալ:

Զարդարեանի գրիչը հոս, արտակարգօրէն անկեղծ, ու բարակուն բան մը ունի Հաւատացէ՛ք որ, որքան ալ զգայի հարցումիս բաղմամբիւր կարեւորութիւնը, երբեք չէի սպասեր սակայն, ինչպէս բարքերու այս աստիճան յոռետես, միթաստուեր նկարագրութեան մը: Աս ալ անոր համար արդեօք որ Զարդարեան՝ Գաղանձեանի հակադարձօրէն, ընտանեկան նեխած միջոցորտի մը մէջ է մնացած, ինչ որ սակայն ապացուցուեցաւ որ միակը չէ, բացառութիւն մը չէ, փոքրամասնութիւն չէ իր տեսակին մէջ:

Պատկերացուցած յաւին հետ մէկտեղ նորէն ինքն է որ ատոր պատճառները ամենէն աւելի մանրամասնօրէն ու ամբողջական կերպով կը շարայարէ մեզի: Ո՛վ է որ պիտի ուսումնասիրէ զանոնք և դարմանները գրունայու ու գործադրել տալու իր ձեռնհասութիւնը պիտի ուղէ նախամեծար համարել դա-

տապարտելի անսարքերութենէ մը ու պարարտացնող ծուլութենէ մը: Լքուած կիներու հարցին վրայ իր տեղեկագիրը երիտասարդ Սրժաշական մը առաջին անգամ համարձակեցաւ հոս խրկել, անոր համար որ իրեն ներուած չէր իր կամքովը, սեպական միջոցներովը ու կարողութեան չափովը դարման տանիլ անոր: Հոսկից ալ որ և է դեղ ու դարման չի խրկուեցաւ, որչափ գիտենք, և վէրքը կը մնայ վէրք, աւելի լայնալով ու խորանկնալով, հետզհետէ ոսկորին դպնալու աստիճան առաջդէմ փոխափ մը վերածուելով, ինչպէս կ'ըսէ Զարդարեան:

Մէկ կողմէն խմանութիւնը, միւս կողմէն տգիտութիւնը, հոս մծղնէութիւնը, անգին վէնէրեան ակտերը, պանդխտութիւնը, անբընական հրէշութիւնները, բարեպաշտ կիներուն՝ իրենց տէրտին անբաւական եղող եկեղեցիէն ուժացումը, ապաստումի խոշոր քայլերով կ'առաջդիմեն և հարցնող փնտռող չիլայ, բաց ի ամուսնալուծումի համար ներկայացուող մէկ քանի խնդիրներէ. ամէն մարդ երեսանց յարգելով նուիրական աւանդութիւնները, իրենց հաշիւին ուղածին կը գործեն, ամուսնական մաքսախուսութիւնը ամենէն աղետալի կերպով և խիստ ընդարձակ աստիճանի մը վրայ կը շահագործուի, առանց այդ մասին բառ մը զրուցուելու, գրուելու, հրապարակուելու, կեղծ ամօթի մը տակ պարտկուած. և միակ աննշան հարցում մը կը բաւէ որ դայ նշգրակի հարուածը ըլլալ հասունցած վէրքին և թարսիս դուրս ցայտեցնել: Այլ սակայն խնդիրը չի դոցուիր այսչափով, քանի որ անոր բարոյապէս կենսական ու սերտ առնչութիւն ունենալը ժողովուրդին սիրտին ու կեանքին հետ, ամենքն ալ կը հատնատեն կոր խնդի հետ և կ'ընդունին թէ վէրքը բաց կը մնայ միշտ ու անմիջական դարմանի կարօտ:

Ամէն մէկուն գրածին առիթով ըսելիքս ըսի. հիմա կը մնայ խնդի մէկ քանի ընդհանուր նկատողութիւններ ալ ընել և վերջացնել, որովհետեւ կը դգամ որ երկարեցաւ: Բայց անկէ առաջ չի մոռնամ շատ կարեւոր կէտ մըն ալ: Փէշիշեանի բարեկամներէն մէ-

կը, իր գաւառի կեանքէ նորալէպերուն հա-
մար դիտել սուեր է որ այդ մերկ յայտնու-
թիւնները Պոլսական կամ Եւրոպական բար-
քերու միայն կը պատշաճին: Ահաւասիկ սխալ
կարծիք մը որ շատերունն է և որ խորունկ
արմատներ ձգած է մեր մէջ: Գաւառացիին
բարոյականէ զուրկ կը գտնէ Պոլսեցիին և
Պոլսեցիին ալ իր կարգին իր մեղքը Եւրոպա-
ցիին շաւակը կը բարդէ և երկուքն ալ կը
սրբանան ու իրարմէ խնամով կը ծածկեն ի-
րենց թերութիւնները, մոլութիւնները, ան-
տեղը: Պոլսի կիները ու աղջիկները բոլոր
լկրտած ու բաց բաներ են գաւառացիներուն
համար, և Եւրոպայի իգական սեռը առանց
բացառութեան հորիզոնականներէ բաղկացած
է Պոլսահայներուն խելքով: Ասիկա, նախ
միակողմանի ընթերցումի, չի գիտցած բանին
վրայ վճիռ արձակելու և յետոյ ատանկով իր
խկ յանցանքը պղծակցնելու մեղմացնելու
ճիգի մը արդիւնքն է: Եւ, ականատեսօրէն,
կը պնդեմ որ, ինչպէս որ կինը կին է ամէն
տեղ, անանկ ալ խելօքը խելօք, անառակը
անառակ է ամէն տեղ, ինչպէս գաւառներու
մէջ նմանապէս ե՛ւ հոս, ե՛ւ Եւրոպա: Եթէ
Եւրոպայի մէջ, կամ մասնաւորապէս մէկ քա-
նի մայրաքաղաքներու ու մեծ կեդրոններու
մէջ ապականութիւնը կամ ապերաստն բար-
քերը, տարբեր ուղղութեան մը մէջ աճած,
բազմացած են՝ սիրային նոր, ներողամիտ ու
յանդուգն վարդապետութիւններու շնորհիւ,
ադ չի նշանակեր սակայն որ իրենց կողմէին
ու խոստումին գիտակից, պարկեշտ ու առա-
քինի կիներ չիկան հոն ալ: Շատ անգամներ
ինքնիրեննին բայց սիրով կապուած զոյգեր,
տէրտէրին կապածէն շատ աւելի հաստատուն
եղած են: Կ'ընդունիմ որ հոն ամուսնական
քիչ շատ յարմարագոյն ու միշտ կատարելա-
գործող, բարեփոխող խոհական օրէնքա-
դրութիւններ, հետզհետէ նուաղ կը քաջա-
լերեն ու կը մղեն կին մը ընտանեկան անել
դժուարութիւններու ու անվայել յարաբերու-
թիւններու մէջ. բայց, միւս կողմէ գաւառի
խիստ պահպանութիւններովը կապկպուած ու
յարաբերութիւններուն դժուարութեանը պատ-
ճառով պարկեշտ միայն ձգած կինը—ձգէ որադգա-
պղծութիւնը (inceste) ատոր առաջին ալ աւեր
է,—շատ պակաս կ'արժէ քան այն եւրոպացի
կինը, որ ազատ ու այլասերած բարքերու մէջ
ապրելով, բնաւ հսկողութեան ենթարկուած
չլլալով և շատ անգամ ինքնագլուխ՝ իր
հացը ինքն իսկ ձարելով մէկտեղ, առաքինի
ու բողոքանուէր կը մնայ իր ամուսինին կամ
մարդուն, բացարձակապէս ու գիտակցօրէն:

Կ'ամփոփեմ: Պատասխանաբարդները ա-
մենքն ալ ինծի հետ համամիտ են որ ոչ մի-
այն ապօրէն յարաբերութիւններ կան, այլ
նաեւ բարոյական մեծ աւեր մը կը սպառնայ
մեր ընտանեկան կազմակերպութեան: Ամեն-
քնն ալ ինծի հետ կ'ընդունին որ կինը կին է
գաւառի մէջ ալ և Հայահայերն ալ զուրկ
չեն սիրտէ և անընդունակ հոգեկան
խռովքներու: Մինչդեռ, մինչև հիմա մեր
ամուսնական կաշկանդուած կարգուսար-
քերը պահել յամառող եկեղեցական հայ-
րերը կարծես փայտի կտորներու տեղ դրած
էին մեր կիները և այնպէս կը վարուէին
անոնց հետ: Եւ կարգ մը շօլէններ ալ ընդ-
հակառակը, ինչպէս ըսած եմ արդէն, հրեշ-
տակներու, երկնային էակներու տեղ դրած
էին զանոնք, ամենքն ալ «Վարք Սրբոց»ի
կենդանի ու կարկառուն տիպարները կարծե-
լով: Ամենքն ալ կը չեչտեն ամուսնական ան-
յարմար ու անընական կապերու յաճախու-
թիւնը ու անոնց աղէտալի արդիւնքները և
գրեթէ նոյն բառերով ու ուժով կը պահան-
ջեն աւելի գիտակից, աւելի մարդկային, ա-
ւելի արդարացի ամուսնական կանոնադրու-
թիւն մը: Ամենքն ալ համաձայն են գե-
ղերը աւելի վարակուած ու աւելի ապա-
կանուած նկատելու մէջ, բան մը որ միայն մեր
երկրին յատուկ չէ: Ուրեմն չի գատա-
պարտենք քաղաքակրթութիւնը որ եթէ իր
չարիքները ունի, անոնցմէ շատ աւելի լայն
բարիքներ ունի, կը բաւէ որ ընտրել ու օգ-
տուիլ գիտնանք անոնցմէ, և աշխատինք շը-
նորհիւ կրթասէր Վեհ. Կայսեր լուսամտ
բաղձանքներուն, զայն տարածել գիւղական
յետին անկիւններուն մէջ:

Եւ եթէ, բանի մըն ալ չի ծառայէ այս
վերջակէսը զոր Մասիսի Պատ. Խմբադրու-
թիւնը պարտաւորեց զիս գնելու, գոնէ ա-
ռիթը կուտայ ինծի կենցաղագիտական հա-
ճելի պարտք մը կատարելու և շնորհակալ
ըլլալու վերոյիշեալ պատասխանները գրող ու
խրկող հինգ եղբայրակիցներու, որոնք այն-
քան սիրալիկ կերպով փութացին պատուել
զիս իրենց անկեղծ ու օգտաւար գրութիւն-
ներով, այլ մանաւանդ ինծի հանդէպ իրենց
բարեացակամ վերաբերումով ու համակրան-
քի ցոյցներով:

ՉԻՖԹԷ—ՍԱՐԱՅ.

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԼԵԶՈՒՆ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ

ԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՌ. Յ. ԳՈՒՐԳԷՆ ԷՖ.

ԹԷ ԽՆՉ ԿՐՍԷ Յ. ԳՈՒՐԳԷՆ
(Տե՛ս «Ծաղիկ» շաբաթաթերթ թիւ 24. հջ
283—284)

—«Ահա երևեալ է մարտութիւն մըն է, այո, թէ Հայոց ազնուագոյն լեզուն, որով թարգմանուեցաւ Ս. Գրոց մեծագոյն մասն ի մէջ այլոց, այս օրուան օրս ամենայնիւ բաւական է սոհմային դարձութեան բոլոր ճիւղերուն, դժբախտիւնն ու գիտականին միանգամայն, ... և կարող կ'ըլլայ մարդկային ամէն միտք բացարեւ, համազօր արդի կատարելագոյն եւրոպական լեզուաց»:

—«Բայ աստի, երդ. դարու ոսկեղինիկ լեզուն մարդկային խօսողութեան ամէն տեսակին, գրական ամէն սեռերու կրնայ պատշաճիլ վայելչապէս, պինդ ու կռու դասականէն մինչև ընտանեկանը, մինչև ժողովրդական հասարակ բացատրութիւններ, և ո՛չ ուրեք կը դեղեւի անճարակութեամբ կամ վարանմամբ»:

«—Կը զարմանանք այսօր թէ ինչպէ՛ս տասնեակնդ դար առաջ գրուած լեզուով մը կարելի կ'ըլլայ ի հայ վերածել⁽¹⁾, զոր օրինակ Լաֆոնթէնի նման առակախօս հեղինակի մը գլուխ գործոցը, Քսենոփոն մը, Կուրախոս մը, Փենելոն մը և որ ի կարգին. նոյն իսկ Էմիլ Զօլան, զուտ դադղիական մտքի այս նորագոյն արտայայտութիւնը, ... և նոյն իսկ զուտ գիտական հաստատանքներ, ... բոլորովին հայացած»:⁽²⁾

1. Բսեւ կ'ուզէ՝ Առաջին Թարգմանչաց լեզուին վերածել. (Մանօթ. Տ. Ե.):

2. Բսեւ կ'ուզէ՝ բոլորովին Մեթոդական լեզու եղած. (Մանօթ. Տ. Ե.):

ԹԷ ԽՆՉ ԿՐՍԷ Հ. ԱՐՄԷՆ ԱՅՏՐՆԵԱՆ
(Տե՛ս Գնեամ. ՔՆՃԱԿ. Քերականութեան)

—«Լեզուին⁽¹⁾ ժամանակագրական դիրքը, հին արեւելեան հեշտ ու ճապող անդորրութեամբ սնած զարգացած կեանքը, ... բնականացանի դիէն ամուլ ու աղքատ կազմակերպութիւնը և ընդհանրապէս միակողմանի (սրբազան) գրուածներու առաջնորդութեամբ յաջորդած աւանդուած ըլլալը, —այս ամէնը չի ներեր որ և ո՛չ հին դպրոցներու՝ թող թէ նոր աղբաց՝ ճշգրտութեան հետ կարենանք մրցիլ».⁽²⁾ (էջ 287):

—«Որչափ աւելի պարագմունք ըլլայ գերաբարի, նոյնչափ աւելի պայծառ կը տեսնուի մեր հմտութեան անբաւականութիւնը: Եւ եթէ մէկը միտքը դնէ որ հասարակաց ընդհանուր լեզու ընելու չափ տեղեակ է, ըսել է թէ շատ վերիվերոյ տեղեկութիւն ստացած է գրաբար լեզուի և թէ շատ վերիվերոյ գաղափար մը ունի ընդհանուր ըլլալու լեզուի մը անսպաս հարկաւորութեանցը».⁽³⁾ (էջ 293):

—«Կրնայ մէկը Տակիտոս մը թարգմանել ապահովութեամբ, բայց դուցէ ոչ Շալտոպրիան⁽²⁾ մը առանց հին լեզուն շորացնելու կամ աղաւաղելու».⁽³⁾ (էջ 293):

—«Գիտական բացատրութիւններէն աւելի ընդհանուր է անհամար ընտանեկան, արուեստական, ընկերային, քաղաքավարական և այլն բառերու և ձեւերու կարօտութիւնն իս, որոնց հին աշխարհը պէտք չունէր, կամ թէ մեղի հասած չեն, և որոնց համար նախակայմէ հաղիւ անուղղակի օգնութիւն մը կրնանք յուսալ».⁽⁴⁾ (էջ 289):

1. Գրաբար լեզուի բոլոր կ'ուզէ, ընդհանուր առմամբ, առանց խորութեան ոսկիի և արծաթի. (Մանօթ. Տ. Ե.):

2. Հեղինակը կը յիշէ զՇալտոպրիան իւրեւ. ներկայացուցիչ նորագոյն մտքի Եւ իրաւունք ալ ունէր այսպէս ընելու, քանի որ ժ.ժ. դարու գրեթէ կեանքը կը գրէր վերագրեալ խոյրեր: Մենք հիմա Շալտոպրիան անուան տեղ կրնանք դնել օրինակի համար Պարթէ, Զօլա, Ռէյքէն և այլն. (Մանօթ. Տ. Ե.):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ



Վերոգրեալ ընդդիմակից հատուածներէն կ'երեւի թէ Հ. Արսէն Այաթնեան ի նկատ առնելով «ընդհանուր ըլլալը լեզուի մը անսպառ հարկաւորութիւնը», գրաբար լեզուն՝ իր բովանդակ սարօքը՝ անբաւական կը համարի նոր մտքին լիուլի արտայայտութեան գործին, —եթէ պիտի չուզուի «հին լեզուն նորացնել կամ աղաւաղել»: Իսկ Յ. Գուրգէն էֆէնտի, հետեւելով ոմանց, գրաբար լեզուի միայն մէկ չըջանն իսկ, Կիսադարը, «ամենակարող» կը գտնէ «այսօրուան օրս մարդկային ամէն միտք բացատրելու առանց անճարակութեան կամ վարանման»:

Մենք ի բոլոր սրտէ կը մաղթենք որ ի սպառ սխալ ըլլան հանճարակուռ Աւագ Վիեննականին լեզուագիտական տեսութիւններն այս մասին, և բոլորովին ճիշդ՝ Յ. Գուրգէնի և նախալոց կարծիքները: Բայց, այսու հանդերձ, պիտի համարձակինք բարեմտօրէն խնդրել Յ. Գուրգէն էֆէնտիէ որ ի հաստատութիւն իր կարծեաց, շարեհաճի Մեսրոպեան լեզունին վերածել՝ իրրեւ նմոյ՝ «զուտ գաղղիական մտքի նորագոյն արտայայտութիւն» մը տաղաչափեալ, զոր կը ներկայացնենք իր փորձ հատութեանն ի ստորեւ: Ընդունելով մեր օղտախնդիր առաջարկը, Յ. Գուրգէն էֆ. խիստ մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլայ հայ գրականութեան ընդհանրապէս, և ի մասնաւորի Մեսրոպեան լեզունին փառքին որուն ա'յնքան նախանձախնդիր է ինք և մենք, և այս կերպով, գէթ փոքր ինչ դիւրացուցած պիտի ըլլայ նոյն լեզուի «ամենակարող»ութեան ապացուցութիւնը՝ ուղղակի և գործնականապէս, քան որչափ դուցէ կարող չեղաւ ընել յորդահոսան խօսքերով:

Սոյն գրական փոքրիկ առաջարկութիւնը կը մատուցանենք իրեն՝ մտածելով որ Ծաղիկի մէջ իր մասնանիշ բրած ոսկեղեղու թարգմանութեանց բնագիրք հին դասականին կը վերաբերին ամբողջութեամբ, և, հետեւաբար ամեներանգ մատենագրութիւն մը չեն ներկայացներ, կամ թէ նորագոյն մտքի արտայայտութեան ձեւոց ծիածան մը չեն պարզեր: — Իսկ Զօլայի մէկ փոքր հատուածին Սեւեան թարգմանութիւնը զոր կը յիշէ Գուրգէն էֆ. իբրեւ վիպական նորագոյն գրականութեան ճաշակ՝ ոսկեղէն լեզուով, ցաւալի է ըսել թէ այնչափ յաջող փորձ մ'է որ կարծես թէ Ոսկեղարն անսպառուելու նպատակաւ եղած ըլլայ: Նաև Կիւսդաւ լը Պօնի պատառիկը հազիւ թէ գիտական ըսուելու հանգամանքը կը կրէ, այնչափ կէս-սոյլովրդական բացատրութիւններով գրուած բնագիր մ'է, և որուն ոսկի թարգմանութենէն մեծ բան մը չապացուցուի ի նպաստ Մեսրոպեանին «ամենակարող» գիտականութեան: Եթէ բազմափորձ ու քաջահմուտ ոսկեղարեան թարգմանիչը բարեհաճի մեր այս անգամ հրապարակաւ առ ինքն ներկայացուցած գաղղիներէն տաղաչափութիւնը վերածել ի տաղաչափեալ լեզու Կիսադարուն, և իր գործը եթէ յաջողութեամբ պսակէ՝ ինչպէս կը սիրենք յուսալ, դիտաւորութիւն ունինք յաջորդ անգամով մ'ալ հայ-թայթել իրեն նաև տիրապէս գիտական և նոր վիպական կտորներ առ ի փորձ թարգմանութեան, որպէսզի անոնց ևս ոսկի թարգմանութեամբք երևան դայ Կիսադարուն ամենակարողութիւնը՝ ի հրճուանս մեզ և ի հեճուկս թերահաւատ մտաց:

Կը յուսանք որ մեր այս առաջարկը սիրով պիտի ընդունուի Գուրգէն էֆէնտիի կողմանէ, —մանաւանդ որ նրադէտ թարգմանչին և հայերէնագէտին համար հազիւ մէկ երկու ժամու գործ մը պիտի ըլլայ առաջարկեալ թարգմանութիւնը:

ՏԻԳՐՈՆ ԵՂՔԷՆՃԵԱՆ

Ծ. Խմբագր. — Յարգելի յօդուածագիրը թէև միեւնոյն ժամանակ զրկած էր մեզ իր առաջարկած ֆրանսերէն բանաստեղծութեան բնագիրը՝ սակայն մեր կամքէն անկախ պատճառով մը, Մասիսի յաջորդ թիւով միայն պիտի կրնանք հրատարակել զայն:

ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

Կայս. Գահակալութեան Տաբեղարանին առթիւ, երեքշաբթի օրը, Մայր Եկեղեցւոյ մէջ կատարուած դոհարանական արարողութեան նախադասելէ ետքը, Ս. Պատրիարք Հայրը Կայս. Պալատ դնաց և միւս հասարակութեանց Հոգեւոր Պետերուն հետ պատիւ ունենալով ներկայանալու Վեհ. Կայսեր, շնորհաւորական ու երախտագիտական Ուղերձ մը մատուց և արժանացաւ Կայսերական մեծարանաց:

Էջմիածնէն Պատրիարքարան հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ Մայր Աթոռի մէջ գումարուած Եկեղեցական Ժողովը՝ եկեղեցապատկան կալուածոց գրաւման հրամանագրին վրայ խորհրդակցելով, որոշեր է չընդունիլ և չստորագրել այս առթիւ Պրօկուրօրին կողմէ Ս. Հայրապետին մատուցուած գիրը: Միւս կողմէ, որոշեր է որ հարկ եղած դիմումը ըլլալու ևս կառավարութեան մօտ, Հայ. Եկեղեցւոյն վնասարեւ եղող այս կարգադրութիւնը ետ առնուելու համար:— Ռիւթէրի գործակալութիւնն ալ Բեդերսպուրկէն օգոստ. 16/29 թուականով կը հեռագրէ Վիլնիայի թերթերուն. — «Լուսաւորչական Հայոց Էջմիածնի եկեղեցական Ժողովը բացառապէս գումարուելով, որոշեց վերջնականօրէն թէ՛ ո՛չ ինք և ո՛չ ալ նոյն Եկեղեցւոյ Կաթողիկոսը կարող են ստորագրել մատուցուած պաշտօնական թուղթը՝ եկեղեցապատկան կալուածոց գրաւման համար»:— Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը պաշտօնագիր մը ուղղելով Ս. Պատրիարքին, իր կողմէ չընտած է Ռուսահայոց եկեղեցապատկան կալուածներու սեփականութեան իրաւունքին վրայ պնդելու պարտականութիւնը, յայտարարելով թէ Կիլիկիոյ ամբողջ կղերին հետ ինքն ալ համամիտ է Կ. Պոլսոյ Եպիսկոպոսական Ժողովին որոշումներուն և թէ այս մօտքը գրած է արդէն Էջմիածին, Ս. Հայրապետին:— Հինգշաբթի օրը, Տ. Մեսրոպ, Տ. Դրիգորիս և Տ. Վահրամ արքեպիսկոպոսները

ինչպէս նաև Փոխանորդ Սրբազանը Ս. Պատրիարք Հօր քով երթալով՝ խորհրդակցութիւն մը ունեցան եկեղեցապատկան կալուածներու մասին Էջմիածնէն հասած պատասխանին վրայ:

Կիլիկիոյ Կաթողիկոսական նախորդ Տեղապահ ծերունագարդ Տ. Կիրակոս Եպիսկ. Բէքմէշճեանի մահուան գոյժը հասաւ շաբթուս մէջ և Ս. Պատրիարքը ցաւակցական հեռագիր մը ուղղեց Ատանա, Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին: Հանգուցեալը պարկեշտ ու բարեկրօն եկեղեցական մըն էր, բոլորանուէր իր եկեղեցիին ու Կիլիկիոյ Աթոռին:

Աղեփանդիոյ հայ դաղութը մտադիր է եղեր գեղարուեստական յուշարձան մը կանգնել՝ ծանօթ դերասանապետ Սերովբէ Պէնկլեանի հողակոյտին վրայ:

Գեղարուեստ:— Տոքթ. Բենյամին պէյ Շահնազարի դուստրը՝ Օր. Ռաշէլ (քեռորդի՝ ծանօթ ճարտարապետ Լեւոն էֆ. Կիւրեղեանի) որ դաշնակահարութեան դաս կ'առնէր Խալիլոյ մէջ, Մարկառիթա մայր թաղուհոյն անձնական դաշնակահար Բօլինիէն, վերջին օրերս փայլուն քննութիւն մը անցունելով Պօլսնիի համալսարանի Գոնսէրվատիւնի մէջ, վկայականը ստացեր է: Արեւելք, ուսկից կը քաղենք սոյն հաճելի տեղեկութիւնը, կը հաղորդէ թէ այս պահուս Խալիլա կը դոնուի նաև Օր. Աննա Շահնազար՝ գեղարուեստական ուսումնասիրութեանց համար, նախապէս Ֆրանսայի պետական վարժարաններուն մէջ ստացած ըլլալով գրական խնամեալ դաստիարակութիւն մը: Երկու արուեստագէտ քոյրերը տարի մը եւս աշխատելէ ետքը Խալիլոյ մէջ, մայրաքաղաքս պիտի դառնան:

Օրաքերքերը կը ծանուցանեն թէ խումբ մը Եւրոպացի գիտնական ճամբորդներ պատրաստուել են Թիֆլիզէն Երեւան և յետոյ Էջմիածին ու անկէ Իկտիր երթալու՝ Մասիս լեռան դադաթը բարձրանալու համար:

Վանայ Երամեան վարժարանի յոգեւորական առթիւ Եգիպտոսի մէջ 50 ոսկի նպաստ հոււաքուելով՝ Պատրիարքարան ղրկուել է:

ՀԱՐԻՒՐ ԱՄԵՐԻԿՈՒՅԻՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ

ԱՄՈՒՍԻՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ամուսինի ընտրութիւնը, անոր ձեւը, պարագաները և պայմանները ընկերային ամէնէն կենսական խնդիրը եղած է ամէն ժամանակ և ամէն տեղ, ու զբաղեցուցած չափ մը զրոյներ, ամէն ժողովուրդներու մէջը:

Ամերիկուհի մը, — չա'տ օրուած ընկերաբան հրապարակագրուհի մը միանգամայն, — վերջերս սրամիտ զաղափարը ունեցած է, ընկերային ամէն աստիճաններու վրայ զըտնուող ամերիկացի հարիւր աղջիկներու հարցում մը ուղղելով, — իրենց ի'նչ տեսակ ամուսին նախընտրելուն մասին, — անոնց կարծիքը առնելու, և իր ստացած պատասխանները դասակարգելով և ձեւակերպելով հրատարակութեան տուած է, ամերիկեան չա'տ կարեւոր Հանդէսի մը մէջը, ուրկէ թարգմանելով Մասիսի ընթերցողներուն կը ներկայացնեմ զանոնք:

Մա'նաւանդ մեղի համար, գերազանցապէս շահեկան են ազատասխանները, որովհետեւ անոնց մէջը կ'արտացոլայ ամերիկացի աղջիկներու մեծամասնութեան մը նշկարագիրը և իտէալը՝ ամուսինի ընտրութեան մասին, — յաճախ չա'տ գործնական և առողջ տեսակէտներու վրայ հիմնուած իտէալներ, ուրկէ կրնան իրենց բաժին մը հանել մեր աղջիկները:

Յօդուածագիր ամերիկուհին կը սկսի. — Ինձի շահեկան թուեցաւ ուսումնասիրել ամերիկացի աղջիկներու միջին թիւի մը միտքը՝ տեսնելու համար թէ՛ ի'նչ տեսակ մարդու մը հետ է որ կ'ուզեն ամուսնանալ անոնք: Ասոր համար հետեւեալ երկու որոշ հարցումները ուղղելի հարիւր աղջիկներու. — «Ի'նչ տեսակ մարդու մը հետը կ'ուզէք ամուսնանալ»: — «Ի'նչ տեսակ յատկութիւններ լաւագոյն կը նկատէք՝ ամուսինի մը վրայ»:

Պատասխանները գերազանցապէս շահեկան էին, և քանի մը անտակէտներով, զարմացուցիչ:

Վայելուչ մարդ չուզուի

Ամէնէն աւելի զարմացուցիչ բաներէն մէկն է սա յայտնութիւնը թէ, աղջիկներէ շատեր՝ միջին հաշիւով մը, կարեւորութիւն չեն ընծայեր մարդու մը գիրքին, ինչպէս հակառակը կ'ենթադրուի: Հարիւր աղջիկներէն վեցը մինակ նախընտրութիւն մը ցոյց կուտան էրիկ մարդուն ազատութեան, մինչդեռ քսանը ինը, անկեղծօրէն կը յայտնեն իրենց անտարբերութիւնը՝ իրենց էրկան վայելչագեղութեան նկատմամբ:

Օրինակի համար, աղջիկ մը կը գրէ. — Հինգ փարա չեմ տար դրամին և գեղեցկութեան: Զգայուն մէկը կ'ուզեմ ես, որ չարաչար սիրէ զիս, և երբեք չթողու իր դուլէճի օրերուն կիրքը: Կ'ուզեմ ուսումնական մէկը, իմացական հսկայ մը: Բայց չեմ ուզեր որ իր ուղեղը սիրտէն մեծ ըլլայ, որովհետեւ ան պէտք է խենթեանայ իր կնոջը վրայ:

Հոգս չեմ ընեւ իր երեսոյթը

Հոգս չեմ ընեւ, — կ'ըսէ ուրիշ աղջիկ մը, — իր երեսոյթը: Չեմ մտածեր թէ ապագայ ամուսինս գեղադէմ պիտի ըլլա՞յ թէ ոչ: Բայց կ'ուզեմ որ ան առնալայել ըլլայ: Ճղճիմ տեսականազէտ մը պէտք չէ ըլլայ ան, այլ գործնական, աչք-բայ մէկը, որ կարենայ աշխարհիս մէջը բան մը ընել: Անձնապատան կ'ուզեմ որ ըլլայ, բայց ոչ անձնատէր. կորովի, բայց ոչ յամառ կամք ունեցող. բնաւորութիւնով՝ չափաւոր և լայնամիտ:

Անմիտ երիկ չեմ ուզեր

Կ'ուզեմ որ ամուսինս զգուշաւոր ըլլայ իր արտաքին երեսոյթին մասին, կ'ըսէ աղջիկ մը: Բայց անմիտ էրիկ մը չեմ ուզեր: Կ'ուզեմ որ ամուսինս լայնամիտ ըլլայ, խընդիր մը երկու կողմերը նկատի առնելու կարող, բայց իր անձնական հայեացքին վրայ հաստատ, գրականութիւնը, գեղարուեստը և

կրած շտուկները ճաշակելու հալի դարդացած, և սքոռի ու բացօթեայ կեանքի խենթ: Պէտք է խոր յարգանք ունենայ կնոջ հանդէպ, միշտ փաղաքուշ, մեծասիրտ ըլլայ, և պարտականութեան, անձնական պատիւի և արժանիքի զգացում մը կրէ: Մարդ մը՝ զոր միշտ յարգես, բայց երբեք չվիրանաս անկէ: Ու ամէն բանէ աւելի, ան պէտք չէ երբեք ծայրայեղութեան դիմէ: Չափաւորութիւնը, ամէն բանի մէջը, միակ բանն է, զոր պիտի համարէիր անոր վրայ(*):

Իմ հաւասարս բան գերադասս

Իմ գաղափարականս, — կ'ըսէ ուրիշ աղջիկ մը, — ամուսինի մը մասին, էրիկ-մարդ մըն է որ իր կինը իր հաւասարը և ընկերը պէտք է նկատէ: ան պէտք է ինծի հաւասար ըլլայ, քան թէ ինձի գերի վեր: Առանց ինծի հետ վարուելու անախկնկերով մը՝ որ իրր թէ տկար ըլլայի ես, երբ ես յուսահատիմ, ան պէտք է շուտ նշմարէ ադ բանը և օղնութեան համար: Եւ ըմբռնելով թէ, իր ամբողջ գործունէութիւնը տունէն դուրս չի սահմանափակուիր, ձեռքէն եկածը պէտք է ընէ հաստատելու համար ընտանեկան բոյն մը, որ խտուտիկ տղոց գոյութեան գաղափարը թեւածի: Յետոյ, պէտք է ողջունէ զիս, իրր գործող մը, իրեն քովը ի վեր, գեղեցիկացնելու համար շրջանակը ադ տղոց, և անոնց որոնք հետզհետէ պիտի ապրին ադ բոյնին մէջը:

Հաւասարիմ եւ պաշտպանող

Ինչ որ ամուսինի մը քովը պիտի փնտռէի, համակրելիութիւնն է, — կը գրէ ուրիշ աղջիկ մը: Ան պէտք է զօրեղ ըլլայ՝ ո՛չ թէ միջակ ֆիզիքապէս, այլ նաեւ բարոյապէս և մտաւորապէս, ու միանգամայն հաւատարիմ և պաշտպանող: Պէտք է ըլլայ նաեւ խոհեմ և հեռատես՝ խուսափելու ճամար սխալանքներից: Եթէ ասոնք կատարեալ ըլլան իր վերայ, ալ հոգս չեմ ընել թէ բարձրահասակ է ան, վայելչադէմ կամ հարուստ:

Ան մարդուն համար որուն հետը կ'ուզեմ

(*) Շատ տկարակալմ ըլլալու է աս աղջիկը: — Մ. ՍԴ.

ամուսնանալ, — կ'ըսէ ուրիշ աղջիկ մը, — պէտք չէ ըսուի՝ «Աստուած ստեղծեր է զայն, հետեւաբար մարդ է»: Իմ ամուսինս պէտք է ըլլայ մարդ, բառին կատարեալ իմաստով, աղնիւ, վեհագի և ասպետական: Տարբերութիւն չընել, իր հասակաւոր, գեղեցիկ և վայելչաձև ըլլալը: Ամուսինի իմ գաղափարականս է գործի մարդ մը՝ որ գեղեցիկ սկզբնաւորութիւն մը ունեցած է աշխարհի մէջ, և ամուսնական իր ամբողջ կեանքին մէջը անձնուէր սիրողը կը մնայ իր կնոջ:

Առողջութիւն կը փնտռեմ էրկանս քով, — կը գրէ ուրիշ աղջիկ մը, — և ո՛չ թէ ազուրուութիւն: Կ'ուզեմ որ ան ըլլայ սրտոտ՝ բաժնելու համար իմ վիշտերս, և ուրախութիւններս ալ: Մարդ կ'ուզեմ ես, և ոչ թէ քեթեւոյիկ մը:

Բոլոր աս պատասխաններէն յայտնի կը տեսնուի թէ, գեղեցիկ այլը չէ՝ գաղափարականը՝ ամերիկացի աղջիկներու միջին թիւի մը, ինչպէս ընդհանրապէս կ'ենթադրուի:

Միայն երեք աղջիկ հարուստ ամուսին կ'ուզեն

Պատասխաններուն մէջը ուրիշ զարմացուցիչ բան մըն է սա պարագան թէ, հարսութիւնը մեծ ըղձաճք չէ՝ աղջիկներուն, ինչպէս կրնայ կարծուիլ: Միայն երեք աղջիկներ են՝ որ հարուստ ամուսին կ'ուզեն: Իսկ տասնըվեց հոգի ուղղակի կ'ըսեն թէ հարստութեան աչք չունին, մինչդեռ մնացած ութսունը մէկ աղջիկները՝ բնաւ չեն յիշեր զայն:

* *

Ուրեմն ի՞նչ բան կը փնտռեն աս աղջիկները՝ ամուսինի մը քովը: — Գլխաւորաբար, մարդուն առնականութիւնն է՝ գաղափարականը՝ աղջիկներուն: Ասիկա ակրող նօթ մըն է բոլոր պատասխաններուն մէջը: Ահա՛ ի՞նչ պէս կը բացատրէ ադ բանը, աղջիկ մը. —

Նախ, մարդ մը պէտք է քաջողջ ու դօրեղ ըլլայ, աշխատութեան տոկալու համար: Եւ յետոյ, անսահման փափաք և սէր պէտք է ունենայ գործի: Ծոյլ մարդ մը՝ անյարմար է ստանձնելու հայրութեան և ամուսինութեան պատասխանատուութիւնները: Երկրորդ, կ'ուզեմ որ այլ մը յարգէ իր կինը և

պաշտպանէ կեանքի ամէն անհաճոյ և դժուարատար պատահարներուն դէմ: Աշխարհի վրայ աւելի անուշ բան չիկայ, քան էրիկ-մարդու մը պաշտպանութեան հոգը՝ հանդէպ իր կնոջ: Երրորդ՝ ընտանիքի և զաւակներու սէր: Ո՛չ մէկ մարդ պէտք է ամուսնանայ, եթէ չպիտի սիրէ իր ընտանիքը և զաւակները: Զորրորդ՝ բարութիւն և համբերութիւն: Ներողամիտ ողի մը՝ որ համբերէ ամէն բանի և շատ մը ներէ: Հինգերորդ՝ լայն սիրտ մը և ամենատես զատողութիւն: Եւ ամէն բանէ վեր, մարդ մը պէ՛տք է մա՛րդ ըլլայ, բառին ամենակատարեալ իմաստովը:

Վարդ մարդ

Կ'ուզեմ ամուսին մը, — կ'ըսէ աղջիկ մըն ալ, — որ կարող ըլլայ զիս կառավարելու, մէկը՝ որուն կամքը և իմացականութիւնը իմինէս գերադաս ըլլան, անանկ որ ինծի ըսէ. — «Սա՛նկ բրէ» . և ես հաճոյքով հնազանդիմ իր հրամանին:

Ուրիշ աղջիկ մը չա՛տ խտապահանջ ու գաղափարապաշտ է:

Կրնամ կարծել թէ, — կ'ըսէ ան, — Բրիդանթ թէմին սիրտը կոտորտելու չափ նազելիօրէն, — զուարթխոնութեան հաղուադիւտ, չքնաղ ու սիրահար զգացումի մը գոյութիւնը, մարդու մը քովը՝ կրնայ ներել տալ՝ անոր ինծի նէս ... ամուսնացած ըլլալը ... (Օհ ... Գործ ունի աս աղջկան գլուխը ելլող մարդը:) Բայց բաւական յոռետես եմ ես. չհաւատալու համար թէ՛ ինծի համար մէկ մարդ մը կըրնայ գոյութիւն ունենալ: Անոր հանգիստելու յոյս չունիմ երբեք, կամ զայն գտնելէ, առ զէկ մը սիրելէ ետքն ալ, բա՛ն մը կրնայ վրայ գալ, հեռու պահելու համար զիս՝ ամուսնանալէ անոր հետը, բայց նորէն, ան միակ մարդն է որուն հետը կրնամ ամուսնանալ: Ան պէտք չէ որ գոլէճի ընթացաւարտ մը ըլլայ, ո՛չ ալ միշտ յաջող մէկը: Բայց պէտք է ինձմէ բարձր և հզօր ըլլայ, և պէտք է ունենայ, — և ասիկա՛ է ամէնէն հաղուադիւտ բանը, — անսահման գորով մը:

Աղջիկի երեւակայութիւն եւ իրականութիւն

Աշխարհի մէջը մէկ տե՛ղ մը կայ, ուր կը գտնուի իմ գաղափարական ամուսինս, —

կ'ըսէ խորամանկ աղջիկ մը: Աղջիկի երեւակայութիւնս գծած է զօջն, իբր պերճ, վայելագուէր, ասպետական մէկը, որ անհարթ ճամբաները պիտի հարթէ և կեանքը երանաւէտ երջանկութիւն մը պիտի ընէ: Բայց սիրտիս շատ խորերը, կայ ուրիշ պատկեր մը, ո՛չ թէ լայն-ուս, թուխ-աչուի Ապոլոն մը, բայց այն տեսակ նկարագրերով և հոգիով մէկը, որուն կեանքը միացած իմինիս, ներդաշնակ միութիւն մը պիտի ձեւայնէ: Որուն ամէ՛ն մէկ մտածումը, գաղափարը, և իր գործունէութեան ամէն մէկ շարժառիթը, իմինիս հետը ներդաշնակ պիտի ըլլայ: Ո՛չ թէ իր ապրելու և խորհելու եղանակը կատարեալ նմանութիւնը պիտի ըլլայ իմինիս, — որովհետեւ ագ կերպով ո՛չ մէկը պիտի կրնար երջանիկ ապրիլ, — այլ երկու կեանքերը անանկ մը պիտի յարմարին իրարու, որ, մէկուն տկարութիւնը պիտի հակադրուի միւսին զօրաւորութիւնովը:

Իմ skra՝ ինչպէս ամուսինս

Աղջկան մը համար յիմարութիւն է, — կը գրէ աղջիկ մըն ալ, — միտքին մէջը տածել գաղափարը ամուսինի մը, որ գաղափարականներուն ամէնէն անհնարաւորն է, գաղափարականներ, որոնք տեսիլքէն քիչ մըն ալ աւելի են: Սակայն ցցուցէ՛ք ինծի աղջիկ մը՝ որ իր միտքին ու և է մէկ կողմը չունենայ աս տեսակ անիրականալի գաղափարական մը, հոգ չէ՛ թէ զօջն կազմած ըլլայ իր միտքին մէջը և գիրի առած, կամ ըլլայ գաղափարական մը՝ բարեմասնութիւններու և առաքինութիւններու խառնուրդ՝ զոր բացարձակապէս անհրաժեշտ կը նկատէ իր կամ ուրիշի մը կէսը ըլլողի մը վրայ: Ինչ որ ես ամէնէն բաղձալին պիտի նկատէի, ամուսինիս վրայ, ուժն է, որպէս զի անիկա իմ տէրս ըլլայ, ինչպէս ամուսինս:

Ինչ որ վեց աղջիկներ կը փնտենց ամուսինի մը բովը

Առաջին. — Մէկ պայման մը կը պահանջեմ. ամուսինս պէտք է ինձմէ գերադաս ըլլայ:

Երկրորդ. — Կ'ուզեմ մէկը՝ որ փորձութիւններու դիմադրած ըլլայ, և ինքզինքը հանգիստացուցած «աղնիւ քար»:

Ներուդ. — Կ'ուզեմ մէկը՝ որ կ'ապրի, և կ'արդարացնէ իր ապրած իւրաքանչիւր օրուան արժէքը:

Զորոգ. — Կ'ուզեմ մէկը որուն վրայ դնեմ ամէն յոյս, որուն կարենամ վստահիլ, — անա'նկ մէկը՝ որով հպարտանամ, բարեկամներու ներկայացնելով:

Հինգերորդ. — Կ'ուզեմ որ ամուսինս ըլլայ մարդ մը՝ որ կարենայ ուրիշ մարդաց հետը չախուիլ, և անոնցմէ շատին քովը՝ բարձր մնայ:

Վեցերորդ. — (Ու ո'րչափ ինքնատիպ, առողջ ու իմաստալից կերպով բարձր է մտածումը աս վեցերորդ աղջկան, հայ աղջիկ մը բերանարաց ձգելու չափ). Կ'ուզեմ մէկը՝ որուն դաւանները յաջորդ սերունդներուն ներկայացնելու չամչնամ:

Տասը յաջորդներ՝ գոն աղջիկներ մարդու մը քովը ա'նչափ կը փնտռեն.

Հարիւր աղջիկներու պատասխաններուն մէջը՝ ամէնէն աւելի փնտռուած տասը յատկութիւնները կրնան դասաւորուիլ հետեւեալ կերպով. —

42 աղջիկներ՝ իրենց էրկանը քովը կը փնտռեն՝ կորով և նկարագիր:

25 աղջիկներ՝ գործի կարողութիւն:

17 աղջիկներ՝ յարգանք՝ հանդէպ կնոջ:

17 աղջիկներ՝ սէր:

17 աղջիկներ՝ պարկեշտութիւն:

16 աղջիկներ՝ լայնատուութիւն:

15 աղջիկներ՝ զուարթամտութիւն:

14 աղջիկներ՝ ընտանիքի և չաւկի սէր:

13 Աղջիկներ՝ համակրանք:

Իսկ երեք էական բաներ, — գեղեցիկութիւն, հարստութիւն և վսեմելուչ հագուստ,

կապուստ, — որոնք կը կարծուի թէ շատ կը փնտռուին աղջիկներու կողմէ՝ մարդոց վրայ, պատասխաններուն մէջը յիշատակուած են հետեւեալ դասաւորութիւնով. —

6 աղջիկներ՝ կ'ուզեն գեղեցիկութիւն:

3 աղջիկներ՝ հարստութիւն:

9 աղջիկներ՝ հագուստ՝ կապուստ:

Մինչդեռ քառասունը հինգ աղջիկներ անկեղծօրէն կը խոստովանին իրենց կատարեալ անտարբերութիւնը՝ հանդէպ աս երեք յատկութիւններէն ո՛ր և է մէկին:

Ահաւասիկ ամերիկացի աղջիկներու մեծամասնութեան մը գաղափարականները՝ իրենց կէսը ըլլալիք մարդուն նկատմամբ:

Հարիւր աղջիկներու պատասխաններուն հատուածական աս պատկերը՝ կրնայ ամբողջական հայեւիացումը նկատուիլ՝ ամերիկացի աղջիկներու նկարագիրին ու գաղափարականին, ամուսինի ընտրութեան չա'տ փափուկ գործին նկատմամբ, — որովհետեւ աղջիկները իրենց ընկերային մէկ գաղափարով մը պատկանող աղջիկներէ, այլ պատասխանները և մտածումներն են ամէնէն չքաւոր աղջիկէն մինչև միջօրուայ մը աղջկան:

Ասոր քովը, կ'արժէր գիտնալ թէ հայ աղջիկը, — իր աստիճանական ու այլադան երանդներու ամբողջութիւնովը, — ո'րչափ մօտիկ է միտքովը աս գաղափարներուն, կամ ատանկ մտածումներ մը իր միտքին մէջը օրելու չափ մեծցած է, իր մանկութեան սղայութենէն, թէ ոչ՝ ամուսնութիւնը կ'ըմբռնէ դեռ մէկի անգ երկու հոգի ըլլալու միամիտ զուարճութիւն մը:

ՍԴԵԼԼԱ

ՅԱՅԳԱԲՈՂԷ ԼԱՌԱԶՈՂ ԼՈԳՐՈՅՆ

Մօտայուս նեպէր օրհաս, ԼԵՈՒՆ. այդ ժամ է մեկնելոյ եւ ունել քս արժանեաց ըզնանապարհն յաւերժական: Ո՛ր վիճակ պահցի քեզ. յորդոռեիմ յուսայ յերկինս Պարգեւէ ընծայեալ յառասաբաւս քեզ յԱսուծոյն: Այլ փակեմքն գերագոյն, ծանրակրօն պաշտօնն մեծ Յայնաւն ամս վարեալ ի քեզ — խորհեա՛ց ի սոյնս հեծեծագին: Զի որ յազգաց անդ միջի բազմեալ յաբոռ գերագահ, Վա՛յ եղկելոյն, խորագոյնս ըզվե՛ծ յուճցէ զիւր յանցանաց: Յարհաւիրս այսոսիկ, պահե՛ր քաղցրիկ ինձ յանդման երեւեալ, եւ քաղցրագոյն ձայն բարբառոյ հնչէ յօգիս. Զի՞ քեզ այսօր ան եւ դողումն. հի՛մ զանցելոյ ժամանակին Յեղյեղեալ շարս ի մթի, յուզիս սրբի ծանրաբախիծ: Անա Քրիստոս բազմագութ, լե՛ր աներկմիս, զի խոնարհիդ՝ Ո՛ր հայցես ըզրողութիւն, ըզբնաւ յանցանսրդ քաւեցէ:

Թարգմ. ՏԻԼԷՍ.ՆՆ

ՎՈՍՓՈՐԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԳԻՐԷՃ-ՊՈԽԻՐՆՈՒ, 18 Օգոստոս

Երկուշաբթի

Ձի մեղադրեցիք զիս անշուշտ, առջի չարթուն. անհաղորդ դանուելուս համար Մասիսին հետ: Այն անձերեւալից ու փոթորկալից օղին, ուր դիւղերը ողողուեցան և Վասիսորի ջուրերը դեղնեցան, նամակ կամ յօդուած գրելու վրայ մտածելը քիչ մը ծայրայեղ դժբախտութիւն պիտի ըլլար, — առաքինութիւն մը ուսկից դուրի է դժբաղդարար ձեր պատահական աշխատակիցը: Օրերով, դիշերներով, փակուած մնացի խողջիս մէջ, պատուհանէս ատեն ատեն տխուր նայուածք մը սեւեռելով փոքրիկ պարտէզիս վրայ ուր մայիսէն ի վեր այնքա՛ն խնամով յարգարած ածուներս, զուրդուրանքով հասցուցած ծաղիկներս, խանդարուեցան, տարտղնեցան, հեղեղէն քշուելով: Եւ հիմայ որ, ընտելեան այդ բուն քմահաճոյքը անցած, զարնան վերադարձնում մը ու լուսաշող արեւ մը կը ժայտին մեղի, հոս՝ քաղքին մէջ ու հոս՝ գիւղին մէջ, հաւասար զուարթութեամբ, փրճացած կը գտնեմ երեք ամիսներու աշխատանքս. շուրջս կը դիտեմ, ու ցեխի կոյտ մը միայն կը գտնեմ իմ սիրուն, զարդարուն պարտէզիս տեղը:

Կեանքն ալ ասանկ անախկալներով լեցուն է՞ միթէ: Որչա՛փ երկտասարդներ տեսեր ենք ու կը տեսնենք, սիրային յարաբերութիւն մը մշակող, վիսրական, բանաստեղծական, մաքուր խեղճներով, երջանկութեան երազներով. ու փոթորիկ մըն է կը փրթի յանկարծ, աղջիկը իր սիրտը ուրիշն կը նուիրէ, գրեթէ անդիտակից հակումով մը որուն դէմ չի կրնար սակայն մաքառել կամ ուրիշ մը կը յախշտակէ այդ սիրտը իրմէ, իւրացումով մը որուն համար բաւական եղած են արագ հանդիպում մը, նայուածքի մը ձգողականութիւնը, դիւթող քանի մը խօսք: Անդին, միւսը, որ այնքա՛ն սիրտ հատցուցած, անոյշ-լեղու թափած, զոհողութիւններ

ըրած էր, ինքզինքը դամուած կը զգայ՝ կեցած տեղը. ա՛լ առաջ չի կրնար երթալ ու ետ դառնալը տխուր է. կեանքը կը քայքայուի, երջանկութիւնը կը խորտակուի:

Ամուսնութեան մէջ, դործի կեանքին մէջ, նոյն բանն է միշտ: Տիպար ամուսին ըլլալը, կին կամ այր, հաշուադէտ, դործունեայ մարդ ըլլալը՝ ի՞նչ բանի կը ծառայեն՝ ճակատադրային ձախողուածին առջև:

Այսօր Աստուածածնի երկուշաբթին է, ամբան է՛ն սիրուած տօներէն մէկը: Երէկ, խաղողի օրնութիւն կատարուեցաւ Երեւանի քիչներուն մէջ, աւանդական հանդէսը որ երկրագործին ու այգեպանինն է. հիմա, զբօսական պառտաներ ամէն կողմ, ամէն ճաշակներու համաձայն: Վասիսորի եղբրքները լիցուած են ահագին բաղմունքեամբ. ամէն մէկ շոգեհաւ հաքիւրաւոր ընտանիքներ կը բերէ. մեծագոյն մասը դէպ ի Զուրերը կ'երթան, «Կընիկ-ճղերով, տղայ—մարդերով» ինչպէս պիտի ըսէր Գեղամ, գաւառացի հարադատ դժբաղէտը: Անոնք, սակաւներ, բարձր, մինչեւ իսկ սեղանի սպասներ ունին հետերնին իրենց շատութեանը համեմատութեամբ. կանուխէն կ'երթան կը տեղաւորուին հովասուն ծառերուն տակ, վաղուկ ջուրին մօտ, Եթէ գաւառացի են՝ ծննդավայրի դաշտային օռները յիշելով, ու եթէ Պոլսեցի՝ պէսպիսութիւն մը ընծայելու համար իրենց քաղքէնի սովորոյթներուն: Կը ճաշեն, կը զբօսուեն, կը մրափեն, բացօթեայ կեանքի մը ամբողջ վայելքը ուղեւով ըմբռնելով այդ միակ օրուան մէջ, ա՛հ գամ մըն ալ խաչին գալու համար՝ ինչպէս եկած էին Վարդապետին:

Փողովրդական ընտանիքներուն համար, որոնք նախամեծարութիւնը առօրեայ օղափոխութեան տալու հարկին մէջ կը գտնուին, այս երեք Տաղաւարները ամբան է՛ն բաղձալի արձակուրդներն են զորս կուշտ ու կուռ կը վայելեն: Ու ճիշդ ատոր համար կարծես, մեր Վերին Վոսիսորեան ջոջերն ու մանաւանդ ջոջիկները, — այս բառը մինչեւ հիմայ ստեղծած պիտի ըլլար Պարոնեան՝ եթէ ապրէր ու գրէր, — պղտիկութեան պէս բան մը կը սե-

պեն իրենց համար՝ իրենք ալ նոյն զբօսա-
վայրերը դանուիլ միեւնոյն ժամուն . ազնուա-
պետականութիւնը , որ այլեւս անուշով մի-
այն գոյութիւն ունի մեր մէջ ու հարստու-
թեամբ կը յատկանշուի , խոյս կուտայ այդ
հաղորդակցութենէն կամ շփումէն , թէեւ չա՛տ
մաքուր ըլլայ անիկայ : Եւ ինչպէս՝ որ , ձմե-
ւը , Բերայի մէջ , Սիւքը կամ Թատրոնը , ի-
րենց մաղիքները կը կաղմակերպէն գիւղե-
րու հանդիսականներուն համար , գիշերային
ներկայացումները ու սուառե տիբիումադի
յորջորջուած երեկոյթները Բերայիներուն
վերապահելով , Զուրերն ալ իրենց « առա-
ւօտ » ները ու « յետ — միջօրէ » ները ունին , կի-
րակի և տօն օրեր : Առաջինն այցելուները
կամ յաճախորդները ընդհանրապէս կը հազ-
նին ձերմակ փօսքիւմ , պոխով կուգան ,
հազիւ շրթունքնին կը դպցնեն իրենց մատ-
ուակուած սառնորակ ջուրի բաժակին , քիչ
կը խօսին և ցած ձայնով՝ առջի գիշերուան
պլըժին կամ գօնտուսիօնին վրայ , ու կը
մեկնին համաչափ քայլերով , իրարու ետեւէ ,
միեւնոյն ղսպանակէն մղուածի պէս :

Վերջինները , միջակ դասակարգը , որ կը
հասնի քիչ ետքը , ծածկութեամբ գիւղական
կառքերով , հո՞՞ խառնիխուռն , ուրախ ,
զուարթ , խօսելով , խնդալով , բարքերու և
տարազներու աննկարագրելի ցուցադրութիւն
մըն է զոր կը պարզէ . իր ագեղ կողմերը
ունենալով մէկտեղ , բուն իսկ ժողովրդական
տարրն է անիկա . երիտասարդները իրենց
ձեռքով կ'երթան լեցնել ջուրի շիշերը և
մայրերը՝ ծառի մը անկիւնը կ'ծկուած՝ կաթ
կուտան իրենց գրկի դաւիկն . սեղանները կը
փռուին և օդը որքան զովանայ իրիկուան
կողմ՝ գլուխները այնքան կը տաքնան . նը-
շանուածներ իրենց անուշը՝ կը փորագրեն
ծառի բուններուն վրայ , մինչ արեւելեան
նաւագածութիւնը իր հեշտօրօր եղանակներով
կը զգլխէ վանոնք :

Երբ այս կարճ ուրուանկաւ հասնի Մա-
սիսին , բոլոր այդ զուարճացողները իրենց
տունները դարձած պիտի ըլլան , այրերը առ-
տուն կանուխ վազելով իրենց գործին ու

կիները՝ ընտանեկան աշխատանքներու տակ
բեռնաւորուած : Աստուածածնայ տօնէն ,
Զուրերու այցէն յիշատակ մը միայն մնացած
պիտի ըլլայ իրենց , անոյշ տպաւորութիւն
մը զոր չարաչար աշխատանքին յաջորդող
հանգիստը միայն կրնայ թողուլ :

ՄԵՆԱՍԷՐ

ՆԵՐՇՆԶԱՐԱՆ

Շ. ԳԱԶԱՆՃԵԱՆԻՆ

Ո՛չ կըղգեակ մ'ե խոհրդաւոր , կոսքւած
Ծովերու ծոյլ , հեղուկ գրեկին մեջ անհուն ,
Ոչ ալ բուրգ մը կամ եղեմ մ'որ յեղակարծ
Ըզմայեցնեն կապոյտ ալեւն իմ հոգւոյն . . .
Շքեղ եջ մ'ալ չե՛ բազմեանգ բընութեան .
Ո՛չ հուր մասեան կամ անկոխ խորս մը լը-
փուն . . .

Ուր քափառին , սուգին , ցընդին յաւիտեան
Մթածումիս փոսուռաներն անըկուն . . . :

Մ'ըզմանոյս — մուսան՝ կին կամ հրեհեակ ,
Հոգեաղկապ համադրութեանց անըման՝
Հըրաւակեհ մանրանկարն՝ անպարփակ ,
Անըջանքի , Սիրոյ բիւրեղ Ծաղկաման :

. . . Ու խրովուն պաշտումով խոնջ մըքին ,
Յափբեակուած այդ հաճանչոս Ամբողջին՝
Ներքեցումին կըզգամ ես հուրքն անմեկին ,
— Երկինք՝ ուրկէ բըրբուռն լոյսեր յորդ
կ'իջնեն :

Մ. ՈՒՂՈՒՐԻՆՍԵ

ԿԻՐԱՍՈՒՆԻ մէջ Մասիսի դորձակալու-
թիւնը ազնուաբար ստանձնած ըլլալով թով-
մաս էֆ . Գարագաշեան , կը խնդրենք թեր-
թիս հետ հին կամ նոր առկախ հաշիւ ունե-
յողներէն որ հաճին յիշեալին միջոցաւ կար-
գադրել :

Արժանաւոր Կ. Ս. ԻԻԹԻԺԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՑ Թրագրի

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Ի ԲԱՆԿԱԼԹԻ

47րդ ՏԱՐԵՇԵՐՁԱՆ

Վարժարանս հաստատուած է 1857ին. նպատակն է աշակերտաց տալ կրօնական, բարոյական եւ գիտական կրթութիւն մը: Վարժարանի վարչութիւնը՝ Վիէնայի Մխիթարեանց ձեռքն է: Ուսուցչական մարմինը (corps enseignant) որ կը բաղկանայ Մխաբաններէ եւ վկայեայ, արտաքին ուսուցիչներէ, պիտի կազմեն այս տարի 24 հոգի: Ուսմանց ծրագիրն է՝ արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne) յատուկ՝ յառաջագիրը, որ կը համապատասխանէ գերմանական ռեալական դպրոցին (Realschule) յառաջագրին. բայց ըստ կարի յարմարեցուած է այս ծրագիրը միջավայրի պիտոյից: Վարժարանիս կատարեալ ընթացքն աւարտող աշակերտները կրնան շատ դիւրութեամբ եւ առանց քննութեան եւրոպայի ո եւ է բարձրագոյն վարժարանն յաճախել՝ ուսմանը շարունակելու համար (ինչպէս ունինք աշակերտներ ի Վիեննա, Զաւիցերիա եւն.) եւ կամ կրնան վաճառականութեան ձեռնամուխ ըլլալ: Աւանդուած լեզուներն են՝ Հայ. Տէկ. Գաղղ. Գերմ. եւ Անգլ. (վերջին 2 տարիները): Գաղղիերէն լեզուն գործնականապէս սորվելու համար՝ աշակերտները պարտաւորեալ են միշտ նոյն լեզուն խօսելու, եւ իրենց վրայ պիտի հսկեն գաղղիացի Մարիսկներ, զորոնք յաշկապէս բերել տուաւ վարչութիւնն Բարիպէն: Այս տարի 5 պիտի ըլլայ ասոնց թիւը: Ամէն ամիս ծնողաց կը զրկուի համեմատական ամսացուցակ մը, որուն մէջ մանրամասն կը նշանակուի աշակերտին բարոյական եւ ուսուցչական վիճակը, իւրաքանչիւր դասի մէջ առած նիշերը եւն.: Վարժարանս կը գտնուի ընդար. ձակ ծառալից պարտէզի մը մէջ. ունի իր յատուկ բժիշկն ու դեղարանը: 1904 դպրոցական տարին պիտի սկսի Սեպտեմբեր 1/14 Բշ. օրը: Դպրոցամուտի քննութիւնները պիտի կատարուին Օգոս. ամսոյն 29ին եւ 30ին, իսկ դասերը կը սկսին Կանոնաւորապէս Երկուշ. օրը Սեպտ. 2ին: Հրատարակուած է վարժարանիս 5րդ տեղեկագիրը: Վարժարանիս նկատմամբ ընդարձակագոյն տեղեկութիւններ ուղղող, թող զիմէ վարժարանի վարչութեան:

Թոճակ տարեկան ամեկայն ծախսիւ գիւղերօրիկներու համար 20 օսմ. ոսկի

» տարեկան ամեկայն ծախսիւ գիւղերօրիկներու համար 20 օսմ. ոսկի
» տարեկան ամեկայն ծախսիւ արտաքիններու համար 10 օսմ. ոսկի

Վարիչ
Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ՄԷՆԵՎԻՇԵԱՆ
Կ. Պոլիս, Բանկայի
P. GABRIELE Dr. MNEVICHIAN
Constantinople, Pancaldi

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԳԱՏԵՒԻՒՂ

Դատըգիւղի Մխիթարեան վարժարանը պիտի բացուի Սեպտ. 2ին (ըստ Ն. Տ. Ի): Դպրոցին դիրքը հիւսնալի է, ծովահայեաց, օդաւէտ. դասարանները լուսաւոր են եւ ընդարձակ ըստ բաւականի: Խստիւ կը հսկուի աղայոց բարոյականի, կրթութեան ու առողջութեան վրայ: Կ'ուսուցուին Հայերէն, Թուրքերէն, Յուններէն, Գերմաներէն, Անգլիերէն ու Իտալերէն լեզուները, Իմաստասիրութիւն, Ընթացականութիւն (Physique), Ընթացականութիւն (Chimie), Հաշուաւարչութիւն (Comptabilité), Երկրաչափութիւն, Դրամահաշիւ, Թուրքականութիւն, Բնական Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Պատմութիւն, Մատենագրութիւն, Եւային. Գծագրութիւն, Գեղագրութիւն, Մարմնամարզութիւն, Զայնական եւ Գործիական երաժշտութիւն:

Վարժարանին աշակերտներէն անոնք որ քաջ ու ընտիր կը հանդիսանան ուսմանց ու բարի վարքի մէջ, կ'անցնին յետոյ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանը, եւ թէ էոն ալ քաջ հանդիսանալով ուսմանց ու բարի վարքի մէջ՝ արժանաւոր դատուին, կրնան յաճախել քաղաքին Ակադեմիան ու բարձրագոյն վարժարանները եւ կամ կը զրկուին Իտալիոյ եւ ուրիշ երկիրներու համալսարանները:

Վարժարանին տարեթուական է 25 օսմ. ոսկի. կարօտ ընտանիքներու համար միայն, զիջողութիւն ընելով, 15 օսման. ոսկի. անկէ նուազ թոյակով աշակերտներ չեն ընդունուիր:

Աւելի մանրամասնութեանց փափաքողք կրնան դիմել ուղղակի Մատայի (Դատըգիւղ) Մխիթարեան վարժարանի Տեսչութեան:

Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՐՈՍ
ԾԱՆՈԹ.— Զրիններուն թիւը արդէն իսկ լեցած ըլլալով, այս տարի այլ եւս ձրի աշակերտ չպիտի ընդունուի ընտ: Վարժարանին շէնքն ալ նորոգուած եւ աւելի ընդարձակուած է այս տարի:

ԲՐՈՑ. Յ. Յ. ՄԱՆԻՍԱՃԵԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

59 ՊԱՏԿԵՐ ԵՒ 12 ԲԱՐՏԷՍ

Անաթոլիա Գօլէճի Բնական Գիտութեանց ուսուցիչ Բրոք. Յ. Յ. Մանիսա-
ճեանի աշխատանքները այս ընդարձակ դասագիրքը Աշխարհագրութեան ճիշդին
ամենէն ճշիւ եւ զեղեցիկ դործ մ'է որ պատրաստուած է մեր վարժարանաց միջին
եւ բարձրագոյն դասարաններու գործածութեան համար: 200ի մօտ մեծադիր երեւո-
ներէ բաղկացեալ սոյն դասագիրքը կը պարունակէ 59 մեծ ու փոքր պատկերներ
եւ 12 քարտէսներ որք մասնաւորապէս պատրաստուած են ըստ վերջին աշխար-
հագրական փոփոխութեանց:

Մասնաւոր խնամք եւ ընդարձակութիւն արուած է Թուրքիոյ աշխարհա-
գրութեան, ինչ որ այս հրատարակութեան ամենէն գերազանց մասերէն մէկն է:
Ոչ նուազ կարեւոր են նաեւ գործին վերջն աւելցուած շատ մը վիճակագրական
եւ այլ ցուցակներ, որ անհնաժեշտ են մասնաւորապէս լրագիր կարգացողներու համար:

Կէդրոնասեղի՝ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը

Թիւ 27. Ֆիննանճրլար եօդուշու, 4. Պոլիս

Եւ հեղինակին քով ի Մարզուան

Ընթիւր եւ զօրանոք լաթակազմ

Դից 14 դր.

ԱՓՕՍԹՕԼԻՔ ԻՆՍՔՐԻՊԻՐԻ Ի ԳՈՆԵԱ

(ՃԷՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանս կ'աւանդէ՝ Թուրքիոյ մէջ գտնուող Ամերիկեան միւս գօլէճներուն յար եւ
նման ծրագրով մը՝ Հայ. Օսմ. Անգլ., Ֆրանս., եւ Յուն. (Յունաց հոմար) լեզուներ, նաեւ
բնական, բնապատմական, ուսողական, փիլիսոփայական եւն. գիտութիւններ, իսկ իբրեւ
արուեստ կ'ուսուցանէ կահագործութիւն, լուսանկարչութիւն եւ ջութակահարութիւն:
Բաց աստի յառաջիկայ տարեյրջանէն սկսեալ պիտի հաստատէ 3 տարուան ՎԱՃԱՌԱԿԱ-
ՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ մը ուր մասնաւոր խնամքով պիտի դասախօսուին գործնականապէս
առեւտրական աշխարհ., թուաբ., տնտեսականութ. օրէնսդիտութիւն, վաճառականական
եւ սեղանաւորական գործողութիւններ, պաշտօնական եւ ոչ-պաշտօնական ամէն տեսակ
գրութիւններ՝ Հայ., Օսմ., եւ ֆրանսերէն լեզուներով եւն. եւն. եւ սոյն ճիւղին աշա-
կերանները ստիպեալ չպիտի ըլլան գօլէճական միւս դասերուն հետեւելու: Տարակոյս չի-
կայ թէ այս նորութիւնը որ կը պակսէր մեր մէջ՝ մեծ օգուտներ պիտի ընծայէ հասարա-
կութեան: Գիշերօթիկներու դպրոցական տարեթոշակն է միայն 10 օսմ. ոսկի. նոր տա-
րեյրջանը պիտի սկսի սեպտ. 11/24ին: Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել
առ Տնօրէնն Վեր. Տքչ. Ա. Յ. Հայկազեան ի Գոնեա:

5-6

Կ. Յ. ՏԵՐԲՄԷՆՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից, մասամբ:
սպազմական գործերու պատրաստութեան հոգը.

Դիւն ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մամուլ եւ արագ գործօնեկութիւն.

Արժէք կանխիկ. 5%ի զեղչ.

Մանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵՐԲՄԷՆՃԵԱՆ


ՍԱՄՍՈՆ

Սոյն հանրածանոթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի դո՛ւ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները: Ամբան եղանակին մէջ, համեղ պողպատակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ միջերը մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաձիւղ, Ղայաթիա. Թօփեճըլար Ճատտէսի, Թ. 101.

10-30.



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՂԱՏԱՆ

The Singer Manufacturing Gie.

Ձեռքի, սափ ու ուռի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործութեամբ, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՐԱՐԱՆԻ
ՍԻՆԿԷՐԻ
ՄԱՍԵՐԻՆԵՐ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ.

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵԻՆՏԱՐ.

Չարչը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ Երաւաւորութիւն:

Մասնաձիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղդուլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱԾՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վրէժնա)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԷ ՊԱՎՐԻՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի (ի ԲԱՐՐԱԺԷՆ)

ԱԼԼԵԱՆՅԱ

Մովային ապահովագր. ԸՆԿ. (ի ձեռնով)

Աոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Բոսնի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հաճօրուօ խան, Թ. 52—53—54—55—56

Ն ՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան զեղեցիկ տպագրութեամբ
հրատարակուած

ՄԵԺ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳԱՂԻԵՐԷՆ--ՀԱՅՆԵՐԷՆ

Գ. ՆԱՐ-ՊԷՅԻ

Գիրն երկու հատորին միասին դահկ. 120

Վաճառման կեդրոնացեղին է

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Ղալաթիա Սեղոս խան թիւ 5

5—10

ՀԱՅՈՒՇԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Վարժարանիս նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 9ին. (Ն. Տ.), Զօրեքշարթի: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. 9 սկիզբը. միւս կէսը Յունուարի մէջ, Դաշնակի դաս առնողները 3, իսկ երգեհոնի դաս առնողները 1½ ոսկի աւելի կը վճարեն:

Կէս տոմսակով Ատաբազար ուղեւորելու եւ ուրիշ ղրկութեանց համար՝ կարեւոր է որ վարժարանին գիշերօթիկ աշակերտունիները ինչպէս նաեւ յառաջիկայ տարեշրջանին նոյն վարժարանին աշակերտիլ փափաքող օրիորդները, իրենց անունները ղրկեն՝ եւ կամ անձամբ կամ իրենց պաշտպանին միջոցաւ ներկայանան Մր. Ու. Ու. Փիթի, Թիւ

5, Ամերիկեան Խան Կ. Պոլիս մինչեւ Սեպտ. 4, (Ն. Տ.):

Վարժարանին յայտագիրը ուղղորդուն ձրի կը ղրկուի: Ուրիշ տեղեկութեանց համար գրել Տոքթ. Ս. էֆ. Դավաճեանի, Ատենապետ Խնամակալութեան, Ատաբազար:

ՌՈՊԷՐԴ ՔՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 2/15: Կարգադրութիւններ եղած են նոր ղրկութիւններ տալու վաճառականական ուսմանց համար: Մնայուն բժիշկ մը՝ աշակերտներու առողջութեան, Ժարմամարզներուն ու խաղերուն, ինչպէս նաեւ վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ: Նախորդ տարուը է սկսեալ բացուած է նաեւ փոքր տղոց յատկացեալ նոր շէնքը, ուր կ'ընդունուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ:

5—12

ԼԵԻՈՆ Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վկայեալ Բարիգալ բժշկական վարժարանէն

Նախկին chef de clinique Ֆրանսայի Ատամնաբուժական Վարժարանին: Կ'ընդունի ամէն օր իր բնակարանը՝ Բերա, Մեծ-փողոց Թ. 407 (Եանիի գարեջրատան դէմ):

5—10